

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Ռ Ա Ջ Ի Ն Շ Ր Ջ Ա Ն Ը

Ներկայ թուով կը փակուի «Նոր Կեանք»ի առաջին շրջանը: Ենտպարձ ակնարկ մը նետելով մէկ տարուան մէջ մեր կատարած գործին վրայ, զոհունակութիւնը ունինք հաստատելու թէ մեր առաջադրութեանց մեծագոյն մասը յաջողած ենք գործադրել, եւ ասիկա կը զօրացնէ մեր պարտականութեան զգացումը՝ շարունակելու ինչ որ սկսած ենք: Երբ այս հրատարակութեան ձեռնարկեցինք՝ պէտք չտեսանք ընդարձակ ծրագիր մը սարգելու: Հիմա որ մէկ տարուան հատորը ազգին աչքերուն առջեւ է, հոն պայծառ կը տեսնուի զազափարը որ մեզի առաջնորդած է, ու բոլոր նիւթերուն յօդակապն է եղած: «Նոր Կեանք»ին ընդհանուր սկզբունքը եղաւ ժողովուրդը ինքնախարկութեան հիւանդութենէն ազատել. ուստի հանրային կեանքի ամէն երեւոյթներուն մէջ իրականութիւնը փնտոնեցինք, իրականութիւնը ներկայացուցինք եւ անով կարող եղանք ազգային մտքին հայթայթել այնպիսի նիւթեր որոնք զրականապէս խորհելու միջոցները ու գիւրութիւնները կ'ընձեռեն:

Հայաստանի ժամանակակից կեանքը իր բոլոր մերկութեամբը Հայութեան սրտին առջեւ դրինք: Կառավարութիւններու պաշտօնական տեղեկութիւնները, մեր երկիրը այցելող օտարազգիներու այն քննութիւնները որոնք անոնց ո՛ր եւ է կրքի գրուած են, կողմնակալութեան ո՛ր եւ է կասկածէ վեր են, ծանօթացուցինք ազգին, որ անոնց մէջ տեսաւ ճշգրիտ պատկերներ, յուսատու նկատողութիւններ, եւ անաչառ քննադատութիւններ որոնք ինչքան ալ բարեացակամ սրտով գրուած ըլլան՝ բայց եւ այնպէս մեր ամենալուրջ մտատանջութեանը առարկայ պէտք է գտնան: Գովեստէն գործնանք ու պարսաւէն օգտուինք:

Երբ մեր հայրենիքին արդի վիճակին վրայ ճիշդ, որոշ զազափարներ կազմելը պարտաւորութիւն է, պէտք է նաև հետամուտ ըլլալ եւ հնարաւոր եղածին չափ տեղեկանալ թէ ի՞նչ են եւրոպական ազգերու տարբեր տարբեր շահերը, քաղաքական ձգտումները այն պետութեան շուրջը որուն մէջ է եւ հայ Հայրենիքը: Այլ բաւական է որչափ որ ինքզինքնիս խաբեցինք. պարզ ենթադրութիւններու վրայ հիմնուելով մերթ յայտնիք շլացանք, մերթ յուսահատութեան

անձնատուր եղանք: Իրական ծանօթութիւններ ունենանք: Այս առաջին տարուան համար բաւական համարեցինք ընդարձակօրէն ծանօթացնել Արեւելքի մէջ Ֆրանսայի եւ Գերմանիոյ քաղաքականութեանց ձգտումները որոնք մեզի Հայերու համար արտակարգ կարեւորութիւն ունին: Ու ամէն ամիս ալ ընթերցողներուն միտքը մեր երկրին հետ կապ ունեցող քաղաքականութեան մասին լուսաւորելու համար էն լուրջ հրատարակութիւններէն օգտուեցանք:

Ու անցեալին իրականութիւնն ալ պէտք է քննել ներկային եւ ապագային առաջնորդութեանը համար: Կ. Պոլսոյ եւ հայրենիքի ժամանակակից կեանքէն պատմական տեսութիւնները որոնք այս ԼՂերուն մէջ երեւցան կը պարզեն ազգային յեղաշրջումի մը թուականին պատմութեան քանի մը գրութիւնները: Անոնց մէջ տեսանք ազգային յատկութիւններ որոնք եթէ աւելի փորձառու մաքրով ու նուազ խնդրալիտ սրտով առաջնորդուած ըլլային, տարակոյտ չի կայ թէ կրնային բարեփոխել մեր ճակատագիրը: Կ'օգտուինք փորձառութենէն: Այդ պատմութիւնը երեւան կը բերէ նաեւ տրամաօրթ տեսարաններ որոնք սակայն մեզի յուսահատեցնելու զօրութիւնը չեն կրնար ունենալ: Հայ ազգը, մանաւանդ այսքան դարու ստրկութենէ յետոյ, առաքելութեան մատիպար ցեղը չի կրնար ըլլալ. եւ ո՞ր ազգ, նոյն իսկ մենէ զերազանցօրէն լաւագոյն քայլման ներու մէջ գտնուողը, այդ յաւակնութիւնը կարող է մտաբերել: Մեր հիւանդութիւնները գիտնանք, խորապէս ճանչնանք անոնք որպէս զի զլուրջական միջոցներ ձեռք առնենք եւ ազէկնալու դարմանները փնտոնենք:

Այս մտածութեամբ էր որ մեր խորհրդածական յօդուածներուն մէջ անողորմ եղանք ճշմարտութիւնը փնտոնելու համար: Մեր հանրային կեանքին մօտաւոր անցեալէն ինչ որ մեր համագումարով սխալ եղած էր, առանց վարանելու ցոյց տուինք: Ինչքան ալ քաղցր յիշատակներ կապուած ըլլային այդ անցեալին հետ, ինչքան ալ ժողովուրդին մաքրին մէջ շլացուցիչ տպաւորութիւն թողած ըլլային, բայց եւ այնպէս խստապահանջ եղանք մենք մեզի համար: Ո՛ր եւ է հանրային խնդրի քննութեան մէջ ու որ ժողովուրդին տկար կողմերը փայփայելու փորձութեամբ ճշմարտութիւնը ծածկել կ'ուզէ, կը դաւաճանէ ազգին դէմ:

Եթէ ազգ մը պէտք է լուսաւորուած մաքրով օժտուած ըլլայ սրպէս զի իր ճշմարիտ շահերուն գիտակցութիւնը

ունենայ եւ անոր համեմատ ինքզինքը կառավարէ, պէտք է նաեւ զրկուած չմնայ ուրիշ մեծ ուժի մը բարիքներէն. այդ ուժը սրտէն կը բղխի, ու սիրտն ալ իր սնունդը կ'ուզէ ապրելու, զօրանալու համար: Յունաստանի ասիերէն Նեղոս, Վոսփորէն Արարատ, Տարսուէն Կովկաս, ուր սր հայ ժողովուրդը խելքի եւ սրտի յիշատակներ թողած է, ուր որ հիմա կը փայլի մտաւորական, հոգեկան առաքինութիւնով, կ'այցելենք հոն, կը պրպտենք ամէն բուն շիկ, ու ոսկորներէ եւ ապրող կեանքէ համապատկեր մը կը յօրինենք ու կը ցոլացնենք Հայութեան աչքին: Իր ցեղային յատկութիւններուն զիտակցութիւնը ունենալով է սր Հայ ազգը իր օրուան գոթազգութիւններուն բեռանը տակ պիտի չընկճի: Այդ գեղատեսիլ նկարները իրենց մէջ կը պարունակեն մէկ մեծ գազանիքն այն տոկունութեան ուրով հայ ցեղը զիմացած է դարերու մաշումին եւ անջնջելի կը պահէ իր հաւատքը ապագային համար:

Մեր ճամբուն վրայ չմոռցանք նաև բարոյական տգեղութիւնները որոնք այնքան խուսն երեւան կուզան մեր հանրային կեանքին մէջ. վէպն ու երգիծարանութիւնը ըրինք այն զէնքերը սրունցմով տգեղը նսղկալի ընծայել կ'ուզենք:

Այսպէս ուրեմն ամբողջ տարուան մը շրջանին մէջ աշխատեցանք ազգին միաբեր դրական ուղղութեան մը մէջ գնել ու լուսաւորել, սիրաբար տաքցնել, հսկին ամբաստնել, ամէն տեսակ նախապաշարունակներու գէժ կռուիլ, բարոյական տղիւզութիւնը մերկամարմին զղուելի զարձնել: Կը խոստովանինք որ մեր գործը հասկցուած տեսնելու ուրախութիւնը ունեցանք ամէն տեղ: Կը յիշենք այստեղ միայն ինչ որ կը զրէր մեզ ակնաւոր ու տաղանդաւոր Հայ մը, որ իր գոհուած երօպական երկրին մէջ բարձրագոյն զիրք մը կը գրաւէ, — և ասիկա կ'ընենք լոկ անոր համար որ «Նոր Կեանք»-ի ծրագիրը պարզուած է այդտեղ՝ զրոն զիտողի մը աչքով. «Կը խնդակցիմ՝ ձեզի ոգոյն համար որ կը տիրէ ձեր զրուածքներուն մէջ, որունցմով ձեռնարկած էք Հայերուն բարոյական ու քաղաքական դաստիարակութեանը, միանգամայն լուսաւորելով զիրենք իրենց յատուկ արժէքին մասին՝ որուն նկատմամբ շատերը դադար անգամ չունին: ... Դուք լաւ կոխն է որ կը մղէք, մեր ժողովրդին թափանցել տալով առողջ գաղափարները, եւ զինքը լաւ ճամբուն վրայ գնելով:»

Կը շարունակենք ուրեմն մեր գործը: Տարուան մը արդիւնքը մեզ աւելի զօրացուցած ու սրապնդած է, եւ հաւատք ունինք թէ կարող պիտի ըլլանք օրէ օր աւելի կատարելագործել մեր ծրագիրը և անոր գործադրութեան պայմանները:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԵՒ ՆԱՅԵՐԸ

Բ

ՊԱՐՍԻԿ ԿԱՌՆՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Պարսիկ կառավարութեան և Հայոց յարաբերութիւններուն կեդրոնը Թաւրիզի Հայոց առաջնորդարանն է: Ատրպատականի առաջնորդը ոչ միայն կրօնական պետ մըն է, այլ և աշխարհական իրաւասութեանց ընդարձակ սահման մը ունի: Իրաւունք կը վայելէ ազգային-քաղաքական ամէն խնդիրներուն միջամտելու, ի հարկին ուղղակի Շահին հետ բանակցութեան մտնելու եւ մինչեւ անգամ այս ու այն պաշտօնէի պաշտօնակալութիւնը խնդրելու: Ատրպատականի առաջնորդը այն զերը կը խաղայ կերպով մը ինչ որ օտար կառավարութեան մը ընդհանուր հիւպատոսը, եւ կը վայելէ նոյն պատիւն ու յարգանքը: Պարսից սօսներու և պայրամներու շնորհաւորութեանց առթիւ, Հայոց առաջնորդը բոլոր հիւպատոսներուն հետ միասին կը ներկայանայ պաշտօնական անձներուն եւ իր ազգին կողմէն պաշտօնապէս կը յայտնէ իր շնորհաւորութիւնները: Փոխադարձաբար առաջնորդը պարսիկ բարձր պաշտօնականներուն այցելութիւնը կ'ընդունի առաջնորդարանին յարկին տակ: Հարկ է ըսել թէ, Պարսկաստանի պէս երկրի մը մէջ մանաւանդ, այս ձեւակերպութիւնները ինչ նշանակութիւն և ազդեցութիւն ունին ամբողջի վրայ, եւ թէ շատ անգամ այդ այցելութիւնները կ'սնենան բարերար հետեւանք: Օրինակ, վերջին փետրուար ամսուն, Թաւրիզի բանտը տառապող տասը-տասնը մէկ անձներուն ազատման ոչ մէկ յոյս կար եւ զէպքերը այնպիսի խառնիխուսն եւ ճապաղ զրուածեան մէջ էին որ կը կարծուէր թէ այլ ևս Ատրպատական իր նախկին խաղաղութիւնը չի պիտի գտնէ. Սալմաստի տառապեալ ժողովուրդը իր ազերուսական հեռազիրներուն հետ կը յայտնէր թէ կը պատրաստուի գաղթելու. բանաարկութիւններու, հալածանքի և նեղութեանց ձայնը ամէն անկիւնէ կը լսուէր: Հասու Պարսից Նալ-Քուզի (Նոր-օր) տօնին օրը, Ատրպատականի առաջնորդական տեղապահ Հ. Սարաճեան (այժմ եպիսկոպոս) հիւպատոսներուն հետ ներկայացաւ Վալիաթին (գահաժառանգ). Պարսից սովորութեան համաձայն գահաժառանգը կը նուիրէ ամէն մէկին մէկ բուռ աղ-շահի (*):

— Ես այս նուիրական օրին աւելի նուիրական պարգեւ կը խնդրէի, կ'ըսէ Հ. Սարաճեան՝ մերժելով իր բաժինը:

— Ուզէ՛, ճէնապի խալիֆա, քու ուզածդ զիտուս վըրայ, կը պատասխանէ Վալիաթը այնպիսի սճով մը որ մենք հէքեաթներու մէջ լսած ենք միայն:

(*) Սպիտակ շահանոց զրամ: Մէկ շահին 2 1/2 տան, թիմ է կամ 5 փարա:

վարդապետին ուղածը երկրին խաղաղութիւնն էր եւ բանաստեղծներուն ազատութիւնը, որ նոյն վայրկեանին կատարուեցաւ:

Հայոց առաջնորդարանին պատիւը այնքան բարձր է եղած, որքան ազգեցութեան տէր անձնատուութիւն է եւ դաժ ժամանակին առաջնորդը: Վերջին խառնակ գրութեան ժամանակ, հակառակ առաջնորդական տեղապահ Հօր կառավարութեան աչքին վայելած մեծ յարգանքին, Հայոց առաջնորդարանը քանիցս անխորժ վարձանքներու ենթարկուեցաւ, սակայն տեղապահ Հայրը ամէն անգամ ալ խելացիօրէն գործին մէջէն ելլել զիսցաւ: Վերջին անգամ Նահանգապետին եւ Տեղապահ Հօր յարաբերութիւնները սուր կերպարանք ստացան՝ խարդաւանանքի մը պատճառաւ: Խոյնի մէջ կը ձերբակալուի տեղւոյն առաջնորդական գործակալը եւ անոր կնիքը առնելով, սամանեան հիւպատոս Քիզա պէյը եւ Սարգստատը յեղափոխական բովանդակութեամբ կեղծ նամակ մը կը պատրաստեն ուղղուած Հ. Սարաճեանին, գործակալին կնիքովը կնքուած, և Թաւրիզ Ամիր-Նիզամին կը զրկեն:

Նահանգապետը բարբառովին վրդոված, պաշտօնապէս կը դրէ տեղապահ Հօրը թէ «այլ եւս իրաւունք չունի ոչ մէկ խնդրի միջամտելու»: Հ. Սարաճեան արդարութիւն կը պահանջէ ու բարձր հիւպատոսներուն ներկայութեան հրապարակային դատաստան, եւ կ'աւելցնէ որ դատաստանին յետոյ պատրաստ է մեկնիլ Էջմիածին: Արագ քննութիւն մը սակայն ընդհուպ երեւան հանեց բուն եղբւրսութիւնը և Ամիր-Նիզամը մտերմական նամակով մը տեղապահ Հօր սիրտը առաւ, զանի իր տունը խնջոյքի կանչելով, եւ այսպէս վերջացաւ միջադէպը:

Որովհետեւ այս ուսումնասիրութեան մէջ միշտ առիթ պիտի ունենանք Ամիր-Նիզամի անունը տալու, կարելոր կը համարինք քանի մը տեղեկութիւններ տալ այս բարձրաստիճան պաշտօնատարին մասին:

Ամիր-Նիզամ-Միրզա-Հասան խան 83-90 տարեկան ծերունի մըն է. Ասրպատականի նահանգապետութեան պաշտօնը վարած է առաջ ալ (1883-1893 թ.), եւ այդ ժամանակամիջոցը Ասրպատականի ամենախաղաղ եւ ամենապահապան շրջանը եղած է: Իր անունը միայն բաւական է սարսափ ազդելու սճրագործներուն, աւազակներուն եւ խռովարարներուն: Ժողովրդասէր, իրաւապաշտ եւ արդարասէր կը ճանչցուի:

Պարսկական խորագիտութեան կը միացնէ ընդհանուր ծանօթութիւն մը եւրոպական քաղաքակրթութեան. ժամանակ մը Բարիզ դեսպան եղած է եւ զիտէ ֆրանսերէն լեզուն: Իր նախկին պաշտօնավարութեան միջոցին կրտսերացան բազմաթիւ սճրագործներու պրոկուրներ, գողերու ձեռքեր, շարախօսներու լեզուներ, պարսիկ պատժական վաղնջուց սովորութեան համաձայն, խռովարարներու ականջներ հրապարակաւ սիններու դամուեցան, եւ միայն այս կերպ կրցաւ շարագործութեանց առաջը առնել եւ

ազատ առպարէզ դատժ աւազակները ոչնչացնել (*):

97 մարտի խառնակութեանց առեւ, Պարսից կառավարութիւնը այլպիսի փոփոխ ժամանակի յարմար եւ կարող նահանգապետ գտաւ Ամիր-Նիզամը եւ յաջորդ ամսուն — ապրիլ 8 — Թաւրիզ կը հասնէր ան՝ իր հասարակ պաշտօնավայր Սմրզանաւն:

Այս խելացի ծերունին պատկանելով «բարեկարգիչներու» կուսակցութեան — որոնց զբաղը կը դնուի Պարսկաստանի ներկայ սատրապաժը, — լաւ ճանչնալով իր ակրուժեան շահերը, մանաւոր հոգածութիւն ունի դէպի հայ ազգը և հարկը պահանջած առեւ իր պաշտպանութիւնը չի խնայեր, եթէ շատ անգամ՝ օտար ճնշումներու առի՝ չստիպուի թոյլ վարմունք մը ունենալ:

Գիտեմ թէ իր վերջին ատեններու քաղաքականութիւնը մեր մէջ ոմանց կողմէ խիստ քննադատութիւններու ենթարկուած է: Բայց հասկնալու ենք կացութիւնը. վերջապէս չենք ալ կրնար պահանջել որ Պարսկաստանի վարչները իրենց հայասիրութիւնը այնքան առաջ տանին որ իրենց երկրին շահերը մոռնան Հայերուն համար: Գոչնակցական ծանօթ արշաւանքին առեւ Ամիր-Նիզամ հրաման կուտար «ամենախիստ խուզարկութիւններ կատարել Սալմաստ եւ ո եւ է զիւղի մէջ եթէ յեղափոխականներ գտնուէին, քարոքանդ ընել, արել ու արշաղիլ, առանց խնայելու»: Բայց մտերմական շրջանակներու մէջ կը յայտնուի թէ Պարսկաստան վերջապէս այնքան զօրաւոր երկիր մը չէ որ կարենայ թոյլ տալ իր հոպիւն վրայ այնպիսի գործեր, որոնց աներկբայ հետեւանքը պիտի ըլլար դրացի հաւատակից տէրութեան թշնամութիւնը հրաւիրել. եւ ինք զիտէր որ թիւրք զօրքերուն առջեւ ճամբան բաց կը մինչեւ Թէհրան: Մեր Հայերու քաղաքականութիւնը պէտք է ըլլայ ամէն բանէ առաջ աշխատիլ հոգեր ու գծուարութիւններ շարուցանելու այն միակ երկրին, ուր ամէնէն աւելի ազատութիւն եւ պաշտպանութիւն կը վայելէինք մինչեւ վերջերս:



Պարսից գահաժառանգները, որպէս Ասրպատականի փոխարքայ Թաւրիզ նստելով, հետեւաբար աւելի մօտ գտնուելով հայ ժողովրդի հոժ բազմութեան մը, առիթ կ'ունենան ծանօթանալու եւ շիման մանելու մեր ազգին հետ, մանաւանդ որ գրեթէ միշտ իրենց պատահարակները Հայեր կ'ըլլան, ինչպէս որ ներկայ վալիթին ուսուցիչը Հայ մըն է: Հաճի է ըսել որ այս մօտիկ ծանօթութիւնը ապագայ Ծահերուն կը ծառայէ ճշգրտոյն պաղափար մը կազմելու երկրին քրիստոնեայ հպատակներուն մտածումներուն եւ զգացումներուն մասին, ու այս եղած է զխաւար պատճառը հանգուցեալ Նասրէտաին եւ ներկայ Մու-

(*) Այս օրերս Թաւրիզի մէջ հացագործ մը կ'իլիսի մէջ խարդախութիւն ընելուն պատճառաւ, քթէն օղակ մը անցընելով ամբողջ շուկան պատցուցած են:

զաֆերէտտին Շահերուն ուղիղ և նպատակայարմար վարմունքին ղեպի Հայերը:

Թաւրիզի ներկայ վայրիւթը քսաներեք տարեկան եւրիտասարդ մըն է, վայելչակազմ, լեցուն այտերով, ազնուական Պարսկին յատուկ խոշոր սեւ աչքերով եւ ժրպտաղէմ: Մասնաւոր հաճոյք մը ունի ամիսը մէկ քանի անգամ իր լուսանկարը հանել տալու հոյ լուսանկարիչներու ձեռքով:

Կարելի չէ անշուշտ վճռական կերպով խօսիլ այդ եւրիտասարդին ուղղութեանը եւ ձգտումներուն մասին, քայքայ հիմակուց կարելի է գուշակել որ Պարսկաստանի ապագայ բարեկարգիչ վեհապետ մը ըլլալու ընդունակ է, մանաւանդ որ սիրահար մըն է եւրոպական քաղաքակրթութեան:

Հայերու մասին իր վարմունքը միշտ ուղիղ եղած է: Այս գարնան, հիւպատոսներու ընդունելութեան մը առեն, ամէնուն հետ սովորական քաղաքավար խօսքերը փոխանակել յետոյ, իր խօսքը օսմանեան հիւպատոսին կ'ուղղէր յանկարծ սապէս.

— Գրեցէք ձեր խոյի հիւպատոսին (Քիզա պէյ) որ իր տեղը հանդիստ նստի եւ մեր հայ հպատակներուն դէմ խարդաւանանքներ լարելէ ետ կենայ:

Էլ վեր կֆէնտին հաւանութեան պատասխան մը կը կմկմար, մինչ գահաժառանգին ծանր դիտողութիւնը շատ լաւ տպաւորութիւն մը առաջ կը բերէր բոլոր ներկաներուն վրայ:

Գահաժառանգին ու նահանգապետին յետոյ, մէկ քանի խօսք ալ այն պաշտօնեաներուն մասին որոնք քրիստոնեաներու համար միայն կարգուած են:

Արտաքին գործերու նախարարը Թաւրիզի մէջ ունի իր ներկայացուցիչը, Քեարկիւզար, որուն պաշտօնն է ոչ միայն օտար հիւպատոսներու եւ կառավարութեան միջեւ իրրեւ միջնորդ ծառայել, այլ եւ միջամտել հպատակ բոլոր քրիստոնեայ եւ ուրիշ ցեղերու (հայ, ասորի, զպտի ու հրեայ) գործերուն. քրիստոնեաներու ընդհանուր պատարի դեր ունի, ինք կը նշանակէ զաւանդու Սարիաբասանները, Հոյ Առաջնորդարանին հետ ուղղակի բանակցութիւններ կ'ունենայ, քրիստոնեայ եւ օտարահպատակ վաճառականներու խնդիրները կը լուծէ եւ ու եւ ամբաստանեալ կամ յանցաւոր կը քննէ ու կը պատժէ: Աւելորդ է ըսել որ, որովհետեւ բոլոր այս գործառնութեանց մասին որոշ օրէնք մը չի կայ, Քեարկիւզարը իր քմահաճոյքին ու շահերուն ներշնչմանը միայն կը հետեւի: Սուքիաս եպիսկոպոս Պարզեանցի առաջնորդութեան առան Քեարկիւզարը կ'որանար Հայոց առաջնորդարանին իրաւասութիւնները, չէր ուղիւր ճանչնալ առաջնորդարանին պաշտօնական կնիքը եւ կը սպառնար կոպտութեամբ.

— Խալիֆա', խալիֆա', պարտա Քուտիէթ տայէ բի զակօն իլա տանըշըբասն: (Վարդապետ, վարդապետ, հոս Ռուսիա չէ որ օրէնքի անունով կը խօսիս:)

Սակայն անոր տեղապահ Հ. Սարաճեան բողոքով

մը անմիջապէս պաշտօնանկ ընել կուտար այդ ըմբոստ պաշտօնեան:

Քեարկիւզարէն աւելի ժողովրդին հետ ուղղակի գործունին Սարիաբասանները:

Այս պաշտօնէութիւնը նորահաստատ բան մը չէ. այն հին օրերուն, երբ քրիստոնեաները մուտք չունէին միւսուլմաններու գատական հաստատութեանց մէջ — որովհետեւ իրենց ներկայութիւնը պիտի պղծէր այդ նուիրական վայրերուն սրբութիւնը, — միջնորդ պաշտօնէի մը պէտք է զգացուեր որ ինք տեսնէր քրիստոնեաներուն դատը եւ կառավարութեան հաշիւ տար: Սարիաբասանները սկիզբները քրիստոնեաներ եղած են (Սալմաստ' Հայ, Ուրմի' Ասորի), անշուշտ ազդեցութեան տէր մարդիկ որոնք թէ՛ իրենց հասարակութեան եւ թէ՛ կառավարութեան աչքին մեծ յարգանք են վայելիւր եւ ամէն տեղ ազատ մուտք ունեցեր: Սակայն որովհետեւ ինքը միակ պաշտօնեան է որ արտօնութիւն ունի որոշ հարկ մը հաւաքելու ժողովրդէն, այն ալ Հայերէն, պարզ է որ իր պաշտօնը՝ իրր շահու լաւ աղբիւր մը՝ Պարսիկներուն ընչաքաղցութիւնը զրգոած է. հետեւաբար ժամանակի ընթացքին մէջ անոնց ձեռքը անցած է այդ պաշտօնէութիւնը, որ յաճախ չարիք մը կը դառնայ ժողովրդին դէմին:

Սարիաբաստը իւրաքանչիւր հայ տունէ իբր ատուք կը ստանայ 15 շահիէն մէկ դրան (0,35—0,50 սանթիմ կամ 75—100 փարա), սակայն անշուշտ ատով չբաւականանալով՝ ամէն առիթ յարմար կը սեպէ ժողովուրդը կոպտելու, ետիթները շին պակսիւր, մանաւանդ վերջերս: Միեւնոյն պատմութիւնն է սակայն. այդ մարդիկը իրենք ալ հազարներ վճարեր են պաշտօնին ձեռք բերելու համար, եւ պէտք է փութան իրենց տուածին փոխարէնը լիւրջ գանձելու կարելի եղածին չափ շուտ, որովհետեւ վստահ չեն թէ վաղը զիրենք նոյն պաշտօնին զուխը պիտի տեսնէ: Վերջին անգամ Հ. Սարաճեանի կառավարութեան ներկայացուցած առաջարկը այս մասին՝ շատ զեղեցիկ կը կը պահանջէր որ Սարիաբաստը առաջնորդարանէն ընտրուի, կառավարութիւնը վաւերացնէ զանի, եւ փոխանակ ատուքը ինք գանձելու ուղղակի ժողովրդէն՝ առաջնորդարանը յանձն առնէ վճարել որոշուած դուժարը, ինքը գանձելով հասարակութեանէն:

Այս պաշտօնեաներէն զատ կան եւ Հայերու հետ անմիջական յարաբերութիւն ունեցող ուրիշ պաշտօնեաներ: Թաւրիզ բաժնուած ըլլալով 27 թաղի, իւրաքանչիւր թաղ ունի իր թաղապետը՝ իրեն յատուկ զբօշակով: Հայոց թաղապետը կը կոչուի Ղալա պէկ, Ղալա թաղի (Բերգաթաղ) անունով: Կայ եւ Պէկլար պէկի (որպէս թէ ոստիկանապետ): Իսկ գաւառներու մէջ խաներ, Կիւղատէր ազաններ, մէլիքներ եւ քէթիուաւաններ, որոնց մասին առիթ պիտի ունենամ ուրիշ անգամ խօսելու:

Հիմա, Սալմաստէն հասած գոյթ մը զիւ կը ստիպէ այժմէութիւն ունեցող տխուր գործով մը զբաղելու:

Լսենք նախ լուրը: Շատախցի ինը գաղթական Սալմաստի Մահլամ վիւղը երթալով Կիւղացիներէն կը խնդ

րեն իրենց բնակութեան տեղ տալ առեմարար: Գիւղացիները կը մերժեն, ու, ալ աւելի, կ'ստալարութեան կը դիմեն բողոքելով: Պարսիկ սարքազներ (սրպէս թէ զինուոր) եւ ֆարրաշներ (որպէս թէ ոստիկան) կը սկսին հալածել այդ խեղճերը, եւ չնայելով որ անձնատուր կ'ըլլան, տեղն ու տեղը կը խողխողեն:

Յաւալի, խորապէս ցաւալի է այս դէպքը: Ոչ մէկ ասեն, պարսիկ կառավարութիւնը մահուան պատապարտած է ըրիստոնեան: Մահմետական մարդասպանը կը սպաննուի անպայման, իսկ ըրիստոնեան՝ լսի տուգանքի կ'ենթարկուի, շատ անգամ բանտի երեսն իսկ շտեմնելով: Պարսից Շահերուն հրամանը միշտ ատ է եղած. Հայը հպատակ է, զէնք չունի, ուրեմն պէտք չէ զէնք գործածել անոր դէմ: «Խրիոթիանա բուշաք եօք» (ըրիստոնէին դանակ չկայ) մարմնացած խօսք մըն է պարձած ամբողջ Պարսկաստանի մէջ: Քրիստոնեայ մը մահուան պատապարտելու առաջին դէպքը տեղի ունեցաւ անցեալ տարի, Ուրմիի Պուշտան Մէլտան ըստած հրապարակին վրայ, ուր զխատուեցաւ Դաւիթ Պինի Ալրամ անուն ասորի մը՝ որ կ'ամբաստանուէր իր մարդասպան, թէպէտ իրօք անմեղ էր խեղճը եւ մտեանդ խուժանին պահանջման զոհ կ'երթար: Սակայն այդ ատեն զօրաւոր կերպով միջամտեցին պետականներ ու հիւպատոսներ եւ Ուրմիի օրինազանց պաշտօնեաները պաշտօնանկ եղան:

Իսկ Սալմաստի այդ դէպքը ըստմեծցուցիչ տպաւորութիւն կը թողու խորհողին վրայ: Գործը ինչպէս պիտի վերջանայ, նշանակութիւն չունի. կ'ուզէ թող բոլոր պաշտօնեաները պաշտօնանկ ըլլաին ու պատապարտուին, ինչ փոյթ, քանի որ անգամ մը սկիզբ դրուեցաւ սպաննութեան ըրիստոնէի վրայ: Տարակոյս չի կայ որ Շահի կամ բարձրագոյն պաշտօնէութեան հրամանը չէր ատ, բայց Պարսկաստանի մէջ եթէ սխալ բայ մը առնուի, առաջըր դիւրաւ չառնուիր:

Մահլամի զիւղացիներուն վարմունքը անշուշտ հիմակ ամենքս կը պատապարտենք: Բայց արդար ալ ըլլանք ատ խեղճերուն համար: Այդ զիւղացիները բիշ ժամանակ առաջ ինչն էր ըսես չբաշեցին կարչ մը մարդոց ձեռքէն, որոնք եկած իրենց զիւղը բազմած էին, ու, առանց ըրիւտ պէյէ մը տարբերութիւն ունենալու, խեղճ ժողովրդին վրէժն հեծած՝ ամէն զեղծում ու բռնաբարում ի գործ կը դնէին: Նոյն այդ զիւղացիները յետոյ ինչն էր չբաշեցին իրենց այդ անկոչ հիւրերուն պատճառաւ երեսն եկած զրբութենէն:

Քաղաքականութեան մէջ է մանաւանդ որ ամէն սխալ կը տուժուի: Պարսկաստանի մէջ սեր ապագան վերջնապէս չլսանդելու համար, պէտք է ո՛չ միայն աշխատիլ վերջին սխալները վարձանելու, այլ ամէն ժամանակէ աւելի լսորջ ու տեղական պահանջներուն պիտակից քաղաքականութիւն մը սկսիլ:

Վ. ՇԱՀԻՆԻ

ԺԱՄԱՆԱԿԱՆԻՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷՁԵՐ

ՀՐՈՍԱԿԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՆ

Գ

Մասնիչներու: Երեւոյնք. — Չերքասիայաշրիշներ. — Թիւրք լրպէսի մը սպաներիշներ. — Հեւեւաքներ:

Քիւրտերուն շնչասպառ փախուտը գործնականապէս բարձրացուց յեղափոխական գաղափարը: Ժողովուրդը սկսաւ սրտանց կապուիլ անոնց որ յաջողած էին ծակաժուտ ընել դարերէ ի վեր ահուտարափ ազդող աւազակները: Յաղթանակը իր բարոյական հետեւանքներով շատ սուղի պիտի նստեր Արմուտանի նորակազմ վարչութեան: Վրդովեցան տեղացի աղաները որոնք՝ Քիւրտերէն աւելի ժողովրդին կեղեքիչները՝ նախազգացումով մը կը գուշակէին թէ յեղափոխական ձեռքերը օր մըն ալ արբարոյստ սուր մը իրենց զլսուն վերեւ պիտի շողացնեն: Ու կ'եռային ու կը զեռային եւ անոնք որ բնութենէն թշնամի ըստեղծուած են ամէն ազնուամիտ գաղափարի, առանց ո՛ր եւ շահ ունենալու այդ թշնամութեան մէջ, ու չարութիւնը չարութեան համար կը գործեն:

Յորովայնէ ընտրեալ մասնիչներուն առաջինն էր Քերովթէ Քէօսեան: Բնութեան մէկ վիժուեմ էր այդ մարդը որ յետոյ «հրէշ վարժապետ» անունով ճանչցուեցաւ. հասակով այնքան ցած է որ ո՛չ Արմուտան, ո՛չ շրջակաները նմանը հաս մըն ալ գտնել հնարաւոր եղած է: Նկատողութեան տանելով Արմուտանի մէջ անոր վարժապետական պաշտօնը, յեղափոխականներէն սմանք մտաբերած էին օգտակար ընել անիկա իրեն գործին, ուտաբացուեր էին իրեն: Հրէշին պատասխանը մերժողական եղաւ, բայց փոխանակ չլսած ըլլալու՝ ընդհակառակը էել էելթօքը ամէնուն բերանը ձգեց ինչ որ իմացած էր: Լսած սպանալիքներուն վրայ երգմալիբ մեղայագրով մը պապանձում խոտացաւ: Բայց ակնզէտ կը մնար յարմար պարագայի մը եւ վստահելի համախօհի մը սրպէս զի ալնեբե ստանձնէր մասնիչի դերը:

Քերովթէ Քէօսեան իրեն արժանաւոր մեղաակիցը գտաւ հաճի Գէորդ Պոյաճեանի անձին մէջ: Յցահասակ, չփոխոր, սեւազէմ արարած մը սրուն ամբողջ կեանքը պատարաններու մէջ կ'անցնէր, արհեստով կեղեքիչ եւ յափըշտակիչ ըլլալուն: Հաճի աղան այդ միջոցին Պոլիս կը գտնուէր, բայց սրտէ ի սիրտ ծամբայ կայ. գաճաճը յուսադիր էր ցիցին վրայ:

Մասնիչներուն մէջ կը գտնուէր եւ կարապետ Գըլըճեան, զեղին միւտիբը. քառսուն տարեկան, կլորիկ դամբով, միականի, միջահասակ: Արտաքուտ համակրանք կեղծեց, բայց յարմար պարագային բնութիւնը ցոյց տուաւ:

Խուճըր կ'ամբողջացնէին՝ Լուսիկեան կարսպետ, տերաւերի սղայ, ՅՏ տարեկան, եւ հաճի ճ'անիկ Ալի:

սանեան: Հաստափոր, հաստ սղուխ մարդ մը այս վերջինս, կեանքին մեծ մասը Պոլիս անցուցած. եկեղեցին շէն կը պահէր իր արծաթեղէն նուէրներովը, ու զպրօջը պայծառ հինգ ոսկի ամսականով: Մծեղը քաժող եւ ուղար կըլողին յաւիտենական տիպարը:

Պահ մը թողունք այս տխուր զեմքերը ու անցնինք Պոլիս:

Քէշիշեան Նշան պատուելին Պոլիս ժամանելով դտաւ իր ազգականը, Սիմօն Մանիկեան, որ Խոսիւտար կը բնակէր. վստահելի, անձնուէր յեղափոխական: Պատուելին հետ սկսան մէկտեղ կազմակերպել Պոլսոյ Արմուտանցիները, կապեցին անոնք Արմուտանի վարչութեան ու կը հետամտէին զրամ եւ զէնք հասցնել երկիր: Կարեւոր կարգադրութիւններ ընելէ վերջ Նշան պատուելին Արմուտան վերադառնալ պարտաւորուեցաւ, վստի զի հոնկէ ղէպի Պոլիս հասած մասնութիւնները կը վաճառէին թէ՛ պատուելին թէ՛ զործը: Տասը բէխովէր եւ հինգ հարիւր փամփուշտ շաքարի տուփերու մէջ դնելով յաջողեցաւ հետք առնել եւ մեկնիլ հայրենիք:

Երբ Մանիկեան ու Քէշիշեան կ'աշխատէին Պոլիս հաստատուն հիմերու վրայ զետեղել զործը, անգին Արմուտան ալ ժամանիչները ժամանակ չէին կորսնցնէր: Պոլիս գտնուող Արմուտանցիներուն միջեւ մեծ դատութիւն կար քահանայացուի մը ձեռնադրութեան պատճառաւ: Հաճի աղաները կ'ընդգլխումային ժողովրդական ընտրելիին քահանայ ձեռնադրուելուն: Գոճած Քերտէթ առիթը նպատաւոր համարեց իր խորհուրդներուն իրազորումին: Յարաբերութեան մանելով հաճի Գևորգին հետ գիտցածները տեղեկացուց անոր ինչպէս և Նշան պատուելին Պոլիս դալուն ներքին պատճառը: Հաճի Գևորգ օգտուեցաւ այս տեղեկութիւններէն, ու Պոլսոյ Արմուտանցիներուն մէջ անցած զարձածին տեղեկանալու նպատակաւ լրտեսական խումբ մը կազմեց որուն պետն ալ ինքն էր: Նշան պատուելին Կիրասոն հասնելուն՝ իր հակերը մաքսատունը կը բացուին: Խուզարկութիւնը անսպասելի էր. հակերը Պոլսոյ մաքսատունը արդէն քննուած, կապուած, կնքուած ըլլալով, արտօնուած էր ուղղակի Արմուտան տանելու: Հաճի Գևորգի մասնութեամբ Պոլսէն թիւրք իշխանութիւնը հետադրած էր Կիրասոնի մաքսատան պատուելին հակերը բանալ եւ շաքարի տուփերը զրաւել: Պատուելին թէև հարցաքննութեան ենթարկուեցաւ բայց փախչելով գաղտնապէս Արմուտան ժամանեց:

* * *

Արմուտան գտնուող հաճի աղաներն ալ իրենց տխուր զործը շատ յաջողութեամբ առաջ կը տանէին: Հաճի ճանիկ եւ Լուսիկեան լրտեսական խումբ մը կազմած կը հետամտէին յեղափոխական մարմինն գործերուն: Այս երկու ապիրասները թէև իրենց նիւթական շահերուն համար իրարու թշնամի էին բայց միացան յեղափոխականներու կորստին համար, մանաւանդ որ անոնք պետին սաստիկապէս հակառակ էին զործի պատճառաւ: Արմու-

տանի հայկական վարչութիւնը հաճի ճանիկէն նամակներով ստակ պահանջած էր. անկա թէև բան մը չէր սուած բայց նամակները պահած էր. Լուսիկեանին խորհրդովը տեղեկալի մը պատրաստեց, նամակներուն հիմին վրայ, կառավարութեան մատուցանելու համար: Ու նաեւ զեղին թիւրքերուն ալ իմացուցին Արմուտան յեղափոխական կազմակերպութեան մը գոյութիւնը:

Գիշեր մը Արմուտանի եւ շրջակայ զիւղերուն վարչական անգամները Ս. Եղիայի մատուրը հաւաքուած ճաշելով կը խօսէին յեղափոխական գործերու վրայ: Սերտլէ պատուելին՝ աս ալ ուրիշ ֆէօսէան մը՝ կրակաւ ասեանարտէն ջորեպան Էօմլրին սպանութիւնը կը փափաքէր: Աս թիւրքը, հայերէնի տեղեկ, հիմա զործը ձգած ցորեկները զեղը ինչ որ իմանար զիշերները կառավարութեան մէջը կը հաղորդէր: «Ախ, սա շունը մեր պիտի վերջացնենք» կը պոտար Սերտլէ: Ճանիկեաններու լըրտեսները, մութին մէջ պահուած, ամէն բան կ'իմանան ու կը հաղորդեն իրենց պետերուն, որոնք ձեռք զէնք մը եղաւ նաեւ Քէշիշեան Նշան պատուելին գաղտնալի Արմուտան մուտքը եւ Պէլլերեան տան հաւաքումները:

Արմուտանի շրջականերն ալ Հաճի Աղաները մասնութեան խտտէն ինքնաբերաբար վարակուած էին: Լիճ Պետրոս Պուտակեան մը՝ գեղին հարուստներէն եւ միւստի Օգնական՝ ախայ կը կծրտէր ժողովրդին զէմ որ կ'ուզէր բողբոջ տասանորդի տուրքերու հաւաքումին մէջ Պուտակեանի անիրաւութիւններուն համար. յեղափոխականներու զրամական պահանջումներն ալ աւելի կատղեցուցած էին այլ թշուառականը որ վրէժխնդրութեան յարմար առիթ մը կը փնտռէր: Առիթը չուշացաւ ներկայանալու:

Բինիկեանի կողմէն յանձնարարուած ընկեր մը Պէլլերեանի զիմած էր հրատարակելու մասնակցելու նպատակաւ: Յեղափոխական պետը Լիճ կը խրիէ անկա Մելքոնեան վարժապետին, հարկաւոր քննութիւններու համար: Վարժապետին հետ Բինիկեանցին անոր առնը մտած պահուն Պուտակեան կը տեսնէ անոնք: Օտարականի մը Մելքոնեանի ընկերակցութիւնը յեղափոխական զործի մը կարգադրութիւնը կուսել կուտայ Պուտակեանին, որ քիչ մը ետքը հետը առած իր արամադրութեան տակ գտնուող երկու ստախանները, ու իմամը, մուսթաբը, թաղական խորհուրդը, թիւրք զբացիները, կը պաշարեն Մելքոնեան վարժապետին բնակարանը: Պատուելին կը յաջողի օտարականը փախցնել, բայց իրեն ժամանակ կը պակսի փճացնել կարեւոր թուղթեր որոնց մէջ նոր գրած մէկ նամակը որով ընդարձակօրէն տեղեկութիւններ կը հաղորդէր քանի մը օր առաջ Լիճ գումարուած ժողովի մը մասին: Այս թուղթերը ձեռք անցնելով տեղական իշխանութիւնը զբաւոր ապացոյցներ կ'ունենայ ամբողջ գաւառի մը կազմակերպութեան մանրամասնութիւններուն վրայ: Անհատներու անունները թէև կեղծ գրուած, բայց զեղերը ճշգրտութեամբ նշանակուած էին: Կառավարութեան մէջը կը լուր խրիւելով տասերկու ստախան կուսան ու

թէ Լիճ թէ Հասան—Օլա նորանոր ձերբակալութիւններ կը կատարուին:

Բօթը կը հասնի Արմուտան ուրիշ ֆէրէման խաշատուր պատուելին կը խրկուի Լիճ աղիտաբեր գեղքերուն դարմանին համար. Պուտակեան անիկա ալ ձերբակալել կուտայ: Մեղքնեանին զուակը կը փութայ այս գերազուցութիւնն ալ հազորգել, իմացնելով միանգամայն որ ֆէրէմանը յաջորդ օրը Ակը պիտի տանին, ուստի պէտք է անցած տեղէն հրոտակներու միջոցաւ ազատել պատուելին: Այս նամակը կը յանձնուի վտաակելի անձի մը որ զայն ֆէսին մէջ կը զետեղէ աւելի ապահովութեան համար: Ճամբան սակայն քիչ մը յոգնութիւն առնելու համար արտ մը կը նստի, ֆէսն ալ վար կ'անէ. հանդուսնալէն հետոյ նորէն ֆէսը դուրսը դնելով ճամբան կը շարունակէ: Բաւական յառաջանալէ յետոյ մէյժը ֆէսը կը շօշափէ, եւ ահա նամակը չի կար. աճապարանքով արտը կը գտնայ. շատ ուշ: Նամակը ֆէսը հանած տեղը ինկած էր. ու արտն ալ Պուտակեանինը: Այդ նամակն ալ մասնիչին ձեռքն էր հիմա. նոր փաստ մը եւս հայկական կազմակերպութեան մը գոյութեանը: Նամակագիրն ալ կը ձերբակալուի:

Իրարու յաջորդող այս գերազուցութիւնները չեն բեկաներ յեղափոխականներու կորովը: Աւելի քան երբեք գործելու պէտքը կը զգան, ու մանաւանդ ամէն գծուարութենէ ելլելու միջոցները կը խորհին միշտ: Այս բոլոր գեղքերուն առթիւ Լիճի հետ յարաբերութիւնները կը զարկին Արմուտանէն. ո՛չ որ կը համարձակի մէկ գեղէն միւսը երթալ գալ: Եւ սակայն մանրամասն տեղեկութիւններ ստանալու պէտք կար: Վարչական մարմինը կը վրտասահի քսանըջորտ տարեկան ազդասէր երիտասարդի մը որ հովիւ էր, անունը Ղարա Մկըր, փոքրահասակ, սեւամորթ, աչքերը փայլահնացայտ, ձիւ պէտ արագավազ: Ղարա Մկըր կը խրկուի Լիճ ուր կը յաջողի ամէն բան իմանալ եւ գալ հազորգել վարչութեան: Հրոտակային խումբը անմիջապէս կը վազէ հոն ուրիշ պիտի անցընելին ֆէրէման պատուելին Ակը տանելու համար: Շատ ուշ, արդէն նախորդ օրը անիկա Ակնայ բանտը նետուած էր:

Աշտան Ս. Գեղորդի ատնին երբ Արմուտանցիները ուխտատեղին հաւաքուած էին, յանկարծ իրենց լուր եկաւ թէ Գոյմագածը ՉՅ հեծեալ ոստիկանով դիզ մտած ու հաճի ճանիկին, Պէյլերեանին եւ Նշան պատուելին առնելը պաշարած է: Հաճի ճանիկ եւ կարապետ սարսափահար մնացին. իրենց տարածած լուրերուն, իրենց ըրած յայտնութիւններուն հետեանքն էր: Թողովուրդը խմբովին ճամբայ ելաւ գեղ վերադառնալու. կէս ճամբան հանդիպեցան Արմուտանէն վազող եկող բնիկներու որոնք Նշան պատուելին համար վտանգաւոր կացութիւն մը կը գուշակէին: Բնիկներու խորհրդին վրայ պատուելին տասնի չափ ուխտեալներով շիտակ շնորհքը քաշուեցան: Գեղ հասնողներէն բաւական թուով մարդ ձերբակալուեցան, որոնց մէջ եւ հաճի ճանիկ ու կարապետ: Էօմլերի լրտես-

ութեան հետեանքն էր այս ամէնը: Պէյլերեան բանտ տարուած պահուն կաշառքով կ'ազատի: Երկու մասնիչները ամթապարտ մնալով եւ միանգամայն ահաբեկ պարտաւորուեցան ուրիշ բանտարկեալներու ստիպումին վրայ հերքել իրենց նախորդ յայտարարութիւնները: Այս պարաշաներուն միանալով կաշառատութիւն, ձերբակալուողները ՉՅ օր բանա մնալէ յետոյ արձակուեցան:

* *

Մինչ հանդարտութիւնը քիչ մը տիրելու վրայ էր, ահա լրտես Էօմլերի սպանութիւնը տակնուվրայ բրաւ Արմուտաններու կացութիւնը:

Բանալէն փախստական Սարգիսը Էօմլերի կնիկն սիրողն էր. երբ շորեպանը գիշերները մերքէզ կ'երթար հաւաքած տեղեկութիւնները հազորգելու, Սարգիս ալ կուգար կնիկնը քով անոր տեղը բռնելու: Օր մը թրքուհին Սարգիսին հազորգեց տեղացի թիւրքերուն իրենց տունը հաւաքումին եւ Հայոց գեմ ընդարձակ տեղեկագրի մը պատրաստութեան լուրը: Սարգիս այդ տեղեկագիրը բերել տալով կ'անհրեւութացնէր: Հետեւեալ գիշերը Էօմլը թուղթը չղտնելով կը պարտաւորուի փնտաւորը միւս օրուան թողուլ. ու ա՛լ մերքէզը չերթար եւ կ'ելլէ տանիքը կը պառկի. կինն ալ ուրիշ տուն մը կ'երթայ մինչեւ լուս ձաւար քաշելու: Սարգիս կնոջը բացախայութենէն օգտուելով կ'ելլէ տանիքը եւ վերմակին վրայէն բլվալներ հարուած մը կ'ուզէ Էօմլերի կուրծքին. շորեպանը «սէհ» մը ընելով վեր ելլել փորձած պահուն սպաննիչը գաշունով կը ճղքէ երկու կուշտէն ու սասկած կը թողու: Բայց բէվալլերը վերմակին վրայ թողած ըլլալուն վերմակը կը բռնկի. զբացիները մախէն հրգեհ կարծելով կը վազեն կուշտն ջուր հասցնելով, բայց զիսկը գտնեն: Լուր կը խրկուի գեղին միւտիր հաճի կարապետ Գըլլըճեանին, որ սակայն ուրիշ տեղ գտնուելուն չի կրնար սպանութեան վայրը գալ:

Առտուն կանուխ բազմութիւ անձեր կուշտն եւ տեղական իշխանութեան կը յայտարարեն թէ Էօմլը ուրիշ տան մը մէջ խեղդած եւ բերուած իր տունը անկողինը զրած են, վրան ալ կազ թափելով: Կառավարութիւնը առանկ յայտարարութիւն մը կ'ուզէր բազմութիւ ձերբակալութիւններ կատարելու պիտութեան համար: Իր տանը մէջ սպաննուած կրնար միայն մէկ հոգիի ձեռքով հարուած կրած ըլլալ: Տառներկու հոգի կը բռնուին, ու սատակն ալ կը թաղեն: Ասկէ ետքը հեռադրով ալ Երզնկայէն բըմիշկ մը կը բերուի. անիկա ալ զիսկը հանելով իբր բընութեան արդիւնք խեղդամահ սպանութիւնը կը հաստատէ: Այդ օրը բռնուածներուն մէջ էր Գըլլըճեան կարապետ ալ որ բանտին մէջ մեռաւ. իր պատիժը ձեռքովը քաշեց:

Թիւրք կառավարութիւնը սակայն դո՛հ չըլլալով, Երիզայի ընդհանուր պատախազի օգնականը հետը ՏՕ հեծեալ զօրք Արմուտան կուգայ եւ բոլոր հայ ժողովուրդը քննութեան կ'ներթարկէ: Քէօնէեան Սերովբէ պատուելի,

եռանդուն յեղափոխականը որ Ս. Եղիայի մատուռը Էօմէրի սպանութիւնը պահանջած էր, ինքն ալ թէեւ փախըստական, բայց կուգայ կը յանձնուի, ու քննութենէ յետոյ ազատ կ'արձակուի: Յետոյ երեւան եկաւ թէ աւէն գաղտնիք դուրս աւաճ, ընկերներէն շատերը մատնած է: Երգնկայէն եկած պաշտօնեան ալ ձերբակալեց աստերիու հոգի, որով քանրչորսի հասաւ Էօմէրի սպանութեան պատճառաւ բանտարկուածներու թիւը: Ասոնց մէջ չէր Պէյլերեան, որուն համար քննիչը յայտարարած էր որ «թէեւ ինչ ըլլալը զիտէր բայց ինչո՞ւն պէտք որ բռնէր: Իրենց միւսները նեղը խօթելով անոնց յետոյ կը յայտնէին ամէն բան:»

ՍՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՄԱՐՏԻԿ ԱՂԱ

(ՉԼԹՊ)

**Ա. Մ Ա Ս
Ե**

Փրանք փողոցին աբաթըմանին մեծ սենեակին մէջ, կիրակի առտու մը, Մարտիկ աղա բուն յուզման մը աւէն նշաններով, խոշորաբայլ կը պտըտէր. մերթ զայրազին պեխերը կ'սլորէր, սպանական շարժումներով օդը կը ճեղքէր, ու մերթ կանգ առնելով բարձրաձայն կը խօսէր.

— Ինձի՛, ասանկնամակ զրե՛ն, ինձի՛ պէս մէկուն... աս ի՛նչ սերագործութիւն է, ի՛նչ սրիկայութիւն է... ի՛նչ իրաւունքով ինձի կը հրամայեն կոր... Ի՛նչ իրաւունքով իմ բրածններուս կը խառնուին կոր. հո՞ս ալ Պոլիս է, սրիկանե՛ր, խայտառակնե՛ր... ես անոնց ամէնուն ալ պիտի հասկցնեմ, ամէնուն ալ... զիս որո՞ւն տեղը կը գնեն կոր... ինձի սրո՞ւն տեղը կը գնէք կոր ծօ՛ սրիկաներ, պոռաց Մարտիկ աղա ոտքը ուժով գետինը զարնելով... ինձի Մարտիկ աղա Սրմաքէշեան կ'ըսեն... ես ազգին համար մենամարտած ու պալօնով օդը ելած եմ... զո՞ւք եղաք ինձի հրամայող, իմ գործերուս խառնող... ո՞վ էք զուք... կորսընցէ՛ք սըւկէ՛, անպիտաննե՛ր, դաւաճաննե՛ր, վատնե՛ր... Մարկո՛ս, Մարզի՛ս, Թորո՛ս, սա շուները զո՛ւրս նետեցէ՛ք...

Արար սպասաւորի մը սեւ զլուխը զրանը մէջ նկարուեցաւ, հետաքրքիր ու խօզարկու:

— Զի՛ս ուղեցիք, խափակայ:

— Լա՛, լա՛, ըսաւ Մարտիկ աղա որ պահ մը իր բարիութեան տարումին մէջ ինքզինքը Պոլսոյ ծառայաշատ տունը կարծած էր, եւ զոր արաբին տեսքը իրականութեան կոչեց:

Սպասաւորը, կ'երեւայ թէ վարժուած «խափակա»յին բուն ձեւերուն, լուս ծիծաղով մը իր ակոսաներուն ճերմակ ձպիտը փթթեցուց զէմքին սեւ ծամածոտմին մէջ ու հեռացաւ:

— Սինըթորնէր, ստահակներ...

Սրահին հետ հաղորդակցող կողմնակի դուռ մը բացուեցաւ, ու բարձրահասակ կին մը, տարիքոտ, ճերմկած մազերով, հպարտ շրթունքներով ու աչքերով, սեմին վերայ երեւցաւ ու մնաց անշարժ, հարցական կէտի մը պէս.

— Ի՛նչ կայ, ի՛նչ պատահեր է, զաւակս, ըսաւ հանդարտ, անուշ շեշտով մը:

— Ի՛նչ պիտի ըլլայ, պոռաց Մարտիկ աղա, ու բուն շարժումով մը գետին ծոխով, ճմաթկուած, կարմիր կնիքով մը արիւնոտած թղթի կտոր մը վեր առաւ, պարզեց, շտկեց ու ձորը ներկայացուց.

— Ա՛ն կարգա՛...

Տիկինը առաւ նամակը ու կիսաբաց պատուհանին առջեւ երթալով, թուղթը լոյսին բռնեց ու սկսաւ կարդալ.

Պարոն,

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Ալեքսանդրիոյ կեդրոնական կօմիտէն իր նոյնըներ 7ի նստիկն մէջ միաձայն նախնուներեւր ձեզ դատասպարուեց 10 եգիպտական ոսկեոյ տոշպակքի, ի պատիժ այն ցած նախատիքներուն, կոշտ ոչակերտա յարձակումներուն որով, Ալեքսանդրիոս գալերեկոյ ի վեր, ամենուրեք, հրապարակաւ, չէք դատարած անպատուելի սա հասարակ Յեղափոխութիւնը ոչ մասնաշարժապէս Դաշնակցական կոշակցութիւնը որ չի կրնար ակտարքեր մնալ այդ մատնիչի ոչ ազգասեպի վայել վարմուշիկն հասկեպ, որ մեծապէս կը վնասէ իր վարկին:

Հրաշիրուած էք ոչքեմն վերայիշեալ գրածարք այս իրիկուեմ Բ. Ե. ժամը 3 1 Չիկն քերեղ ծովեկերեայ «Մասիս» արձարակը յանձնել Դաշնակցական պատուիրակին որ ձեզ պիտի սպասէ:

Կ'ազգարարեկք ձեզ քի փախուստի, արդեւական կամ գրոշակաւ ու ե. ե նկարք խտուչ պիտի պատժուի տեւոսորի ամեն միջոցներով:

« Հայ Յեղափոխութեան Դաշնակցութեան Ալեքսանդրիոյ կօմիտէ »

Երբ լմնցուց, տիկինը զակին դարձաւ.

— Ի՛նչ պիտի ընես, զաւակս...

— Ի՛նչ պիտի ընեմ, պոռաց Մարտիկ աղա. բա՛ն մըն ալ չպիտի ընեմ... կը կարծես որ պիտի հնազանդեմ... այդ սինըթորնէրուն:

— Նայէ՛ ի՛նչ զրեր են, սպանացեր են:

— Քանի՞ կ'անես անոնց սպանալիքը, հոս Պոլիս չէ, հոս Աղեքսանդրիա է, Անդղիոյ հողին վրայ ենք հոս... թող երթան իրենց պէս խախտները վախցնեն, ես անոնց ամէնուն ալ խերը պիտի անիծեմ:

Յանկարծ կանգ առաւ սենեակին մէջտեղ, ձեռքը ճակտին զարկաւ:

— Գտա՛յ, գտա՛յ, զոչեց, հիմա հասկցայ ո՞վ է սա նամակը զրեւ տուողը... աս անոր պորձը ըլլաւ ու է... վա՛յ շունշանորդի վա՛յ... ան իրիկունը զէջ աչքով կը նայէր կոր ինձի...

—Ո՞վ է տտիկա, հարցուց մայրը...

—Ճանրմ, երկու շաբաթ առաջ Պէլլերեաննեց չգացի՞ գիշեր մը, հոն գեղգէկ մը, խլէզ մը, խլլոտ մը կար... յեղափոխական է եղեր, Դրօշակեան, ու շատ մը բաներ բսաւ, բանտ պառկեր է եղեր, սանկ բրեր է, նանկ ըրեր է եղեր, Բնջ գիտնամ... ես ալ փառաւորապէս առակեցի զինքը, յեղափոխականները, ամենքն ալ, բսի թէ...

Հոս, արտիկ աղա, բուն շարժականութիւնով մը կրկնեց իր սովորական ճառը:

—Աս նամակը անոր գործը բլլալու է... իր վրէժը լուծելու համար աս բանը բրաւ, որովհետեւ ան գիշերը խաղը խայտառակ բրի զինքը ամենուն առջեւ... վա՛յ գեղգէկ վա՛յ... ինձի հէ՞... ինձի՞ պէս մէկուն ասանկ նամակ... զիս որո՞ւ տեղ զրին... ես...

Կը յուզուէր կոր նորէն, մայրը ընդմիջեց զինքը.

—Է պիտի երթա՞ս:

—Պիտի երթամ մի, պայծեցաւ Մարտիկ աղա, ցնդեցա՞ր դուն, ես անոնց ոտքը երթամ... ինչո՞ւ, Բնջ պարտականութիւն ունիմ... անոնց ամենուն ալ խերը կ'անիծեմ... Թող երթան տէ անոնք ալ Մարտիկ մը տեսնան:

Աս ըսաւ ու թուղթը ուժիտըն մօրը ձեռքէն խլելով կտոր կտոր բրաւ ու պատուհանէն՝ հովին ցրուեց:

Իրիկունը, ժամը Ծին ատենները, Մարտիկ աղա տունէն դուրս ելաւ ու գեղի Մէշիկի հրապարակը ուղղուեցաւ. առանց հոն երթալու միտք ունենալու, Լուսին պարտէզը նստած հայու մը «Մասիս» սրճարանը հարցուց, սանկ, հարցնելու համար, ու գեղի Սարաֆիէ ուղղուեցաւ: — Հայտէ՛ մէ՛յ մը երթամ տէ փաստաւորապէս յռշամ, ըսաւ բարձրաձայն՝ ապշած անցորդի մը քիթին, անոնցմէ ըլլալով որոնք բարձրաձայն կը խորհին ու լսած ատեննին գրեթէ ոչինչ կը մտածեն: Սրճարանէն ներս մտնելուն պէս, առաջին շարժումը Մարտիկ աղային ընկրկում մը եղաւ.

—Արդեօք սխալ կը մտնամ կ'որ, ըսաւ, ու գուրս ելլալով կարգաց Նոյեան տապանով զարդարուած նշանատախտակը:

—Մասիս, սրճարան Հայոց... չէ, շիտակ է... աս Բնջ աղտոտ տեղ է պէ...

Արդարեւ սրճարանը Մարտիկ աղային ազնուապետական ճաշակները վերաւորող շատ մը կէտեր ունէր: Արեւելեան գեղջուկ սրճարան մը, կարծես Պոլիսէն փոխադրուած, բոլորովին համապատասխան նկարագրին ու ընդմիջեցուն անոնց որոնք կուգան իրենց ծոյլ ոգեւորութեան օրերը անցընել իր ծուռուծուած ձեզունին տակ, եւ որոնք հոն ինքզինքնին Պոլսոյ անկիւն մը պիտի կրնային կարծել, Վոսփօրին զիմաց: Ընդարձակ, երկայն սրահ մը խեղճուկ խարխուլ աթոռներով, սեղաններով ծածկուած. խորտուրբտա, կուզումուզ տախտակամածով հեռուն գանձապետին սեղանը, անշուք, պայմանագրական լոքսուսի

ապակեւոր պահարանով. աղտոտ, տեղ տեղ կտրտած ապակիներ. քիչ մը անդին սերիչ սեղան մը, ուր խառնիխուռն լրացիւրներ պարզուած են: Գուրսը, ուր կ'եղլուի երկու սանդուղներէ, բնագործակ տախտ մը՝ փուլուով ըսպառնացող առաստաղի մը ձերութիւնը նեցուկող ծուռ, մուրրուն սիւներով անկուած, որ, երկու քովէն, ծովին մէջ կը յառաջանայ երկայն նեղ թեւերով: Ամբողջութիւնը անկեղծօրէն արեւելեան, թրքական, ծուռ մուսոս, պառաւ, սախտած, կաղ, հաշմանկամ, կուզ, փլիլիլու վրա՛յ, այնքան ներկայակալ՝ յաճախորդներուն արեւելեան թափթիփաժութեանը, անհոյք երազամուրութեանը հետ, ինչպէս խեղճուկրակ գգեստաւորումին:

Երբ Մարտիկ աղա ներս մտաւ, սրճարանը լեփ լեցուն էր, խառնափնդոր բազմութիւնով մը ուր աղքատիկ տարազներով ժողովրդական տիպարները կը տիրապետէին: Սրճարանը գաղթականներու կեդրոն մըն էր, եկեղեցիին մրցակից: Ծուլսով կուրցած մթնշաղթ մը զոր բարձրագոյն խօսակցութիւններու, քրքիջներու, նարտի շաշոյ հարուածներու աղմուկը կը խուլցնէր: Խօսակցութեան նիւթերը վերջին գեղեցիկ, Հայկական խնդիրը, կրեալի խնդիրը, օրուան հեռագիրները, Բարախալոյ վերջին թիւը, նոր հասած գաղթականները, արաբներուն աղտոտութիւնը եւայլն: Լուս խմբաւորումներ չեն պակսիր. Հոն, վարը, շորս հինգ հոգի, լուրջ, մտակոծ, գլուխին հակած, կարծես գծուար խնդրի մը լուծումին մտալկուութեանը մէջ, տամայի տախտակի մը շուրջը՝ կանգուն կը նային մաքսիսացած ուշադրութեամբ մը, մինչ երկու խաղակիցները կնճոռտ մտահոգ ճակատներով, կը փնտրուեն, կը մտմտան, կը հաշուեն, համբերութիւնը ճաթեցընող յաւերժական մտախոհութիւնով մը. քիչ մը անդին ծերունիներու խումբ մը, ալեհեր, ատեն ատեն զանդուօրէն, ձանձրոյթով խօսող. տեղ տեղ մենաւորներ, որոնք կ'երազեն ծովին նայելով, նարկիլէին ծխափողը բերաննին. ուրիշներ, լրագիրներու մէջ թաղուած. ու բոլոր ասոնց մէջ՝ երբեմն զանգագօրէն շրջող հայ կառասօներ որոնց անհամբերող յամբաշարժութիւնը, գծկամակ, խոժոռ կերպարանքը կրնայ միայն բազմատուլ յոյն կառասօներուն աշխոյժ փութկոտութեանը, մպտուն ստրկութեանը հետ: Սրճարանին ու ամբոխին զիմագծութեանը յարմարող կառասօներ, որոնք ուշ կը պատասխանեն կամ երբեք, քանի մը անգամ կանչուելէ ետք կը հաճին երերալ, քառորդ մը վերջը կը գոհացնեն, յաճախ կը մոռնան, ու կը ծառայեն աղաներու պէս: Իրենց վարմունքէն, կերպարանքէն կը կարծես գուշակել թէ վաղը կամ մէկայն օր իրենց պաշտօնը պիտի թօթափեն. միշտ հոն են սակայն, միեւնոյն զիրքով, զգուանքի, ձանձրոյթի միեւնոյն արտայայտութիւններով.

—Մօ՛, Պետրոս, սո՛ւրճ մը...

Յաճախ կրկնել պէտք է...

—Սո՛ւրճ մը, Պետրոս...

Վայրկեան մը վերջը ձանձրացած ձայն մը կը պատասխանէ, երկարավանկ — կուգա՛յ կո՛ր... Նոյնչափ

վերջը սա բառերը կ'երկարին, ողբերգի մը դամոզողկոտ լարխանութեամբ:

— Էնա վարի՞ լիքի... կասածները ուզելով զէթ յոյն կասածներէն բան մը ունենալ իրենց վրայ, գէթ խօսք մը ընդօրինակել

Մարտիկ աղա հպարտ մը բազմութիւնը ճեղքեց, անցաւ, անցանց իսկ նայելու, մէկու մը պէս որ դարշահոտ տեղէ քը անցներ քիթը բռնելով, տախտին վրայ աչքերը շորս կողմ պատցուց՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պատուիրակը փնտռելու ձեռով: Տեսնելով որ ոչ ոք կը մօտենար, գնաց հեռուն նստեցաւ, պարապ տեղը մաքուր աթոռ մը փնտռելէ ետքը:

— Աս ինչ սոսկալի տեղ է պէ...

Դիմացը, Միջերկրականը, գունազեղուած մարք մտնելու պատրաստուող արեւին հուակ ցոլբերովը զոյժ հողմավար ամպեր կը տեղափոխէին իր երեսին վրայ կամ ստուերոտ թանձրութիւններով կ'ընդհատէին, կը պարզուէր աղտը ու կ'աղոյկ, հեռուն, հորիզոնին ծիրին՝ մանրակապոյն փափուկ երանգներով երազոտած ու երկնքին խառնուած: Արճարանին աջ կողմը ծովին մէջ կ'երկնաւար հողաբզու մը, արեւմուտքէն շէկ լուսաներկուած, ու ձախ կողմը ճերմակ բերդ մը, զրահաւորի ձեռով, ստուերի ու գունաւոր լոյսի զրացնութիւններով նկարչագեղ: Թռչունի թևերու պէս բացուած, կամ փետուրի գրիչներու պէս կ'սքանկուած առաջաստներ սպիտակ արատներով կը կէտիէ տէին հովէն թեթեօրէն խորշումած երեսները ծովին: Արճարանին աջը, ճիշդ քովէն կը տարածուէր աւափափը, նորոգուելու կամ հանգչելու համար եղբրք քաշուած ձրի-նորսի նաւերու, նաւակներու քովերը, շուրջը, մէջտեղերը եռացող, վխտացող՝ կիսամբակ կամ ցնցոտիներ հագած աքաբներու — պզտիկ, մենծ, մանչ, աղջիկ — շարժուն, աղմկալից խառնամբխով մը: Երկին մէջ լուացուողներ, նաւակներէ կողմով ձուկ փնտաղորդներ մերկ ու շղապիւրկ ազդերով, շուրերուն բերած խառնամբխութեան, ժժակներուն մէջ որոնողներ, հոս հոն աննպատակ վազողներ: Տեղ տեղ, այս ոգեւորութեան միջակէտերը կարծես՝ Արաբներ որոնք կը մրափեն, աւազին մէջ փխով թաղուած, գլուխներին էշերու վրայ, ասոնք ալ քնացած կամ խորհող իրենց տխմար ու գտտարկ լրջութիւնովը:

Բայց Մարտիկ աղա մարդ չէր հետաքրքրուելու ո՛չ ծովապատկերին բանաստեղծական, երազուն եւ ո՛չ ալ աւազափին իրապաշտ սփեկնզանի նկարչականութեամբը: Անհամբեր կը սպասէր «պատուիրակին» գալուն, արդէն հպարտութիւնը վիրաւորուած որ ինք անկէ առաջ եկած ըլլար:

— Ինչ երեսով կը համարձակին կոր զիս սպանցներ, ինչու է ինէ առաջ չէ եկեր, ըսաւ ինքնիրեն Մարտիկ աղա որ կերպով մը, առանց զիտնալու, Լուի ԺԻ. Ի խօսքը կը կրկնէր:

Ու յուսահատօրէն աչքը շորս կողմ կը պատցներ ձանօթ մը տեսնելու ակնկալութեամբ:

— Բար՛ իրիկուն, Մարտիկ էֆէնտի:

Մարտիկ աղա, գլուխը վեր առնելով, քովը կանգուն տեսաւ, լուրջ ու հանդիսաւոր, Սուրբանը, որ աթոռ մը առնելով զիմացը նստաւ:

— Աս ինչ գրեթէ էք ինծի, պարոն, պայթեցաւ Մարտիկ աղա, որուն, այս անախորժ երեւումէն, արիւնը կը խը ցատքած էր:

Սկսաւ տնդոտ՝ զրպանները փնտռել առտուն իսկ պատուած թուլթը: Ամէն մեծ մարդերու պէս Մարտիկ աղա ալ մոռացկոտ էր:

— Հա իրա՛ւ, պատանցի, ըսաւ արհամարհանքով... Ատ ինչ գրեթէ էք ինծի... Կուք զիս որուն տեղը գրեթէ էք... զիտէք թէ ես ո՛վ եմ... ինծի Մարտիկ Սրմաքէշեան կ'ըսեն, հարցուցէ՛ք զիս ճանչցողներուն, անոնք ձեզի կ'ըսեն իմ ինչ մարդ ըլլալս...

— Պարոն Պետրոս, ընդմիջեց Սուրբան՝ անտարբեր մը կասածը կանչելով... երկու սուրճ բեր: Եարունակեցէք, Մարտիկ էֆէնտի:

— Ինչ պիտի շարունակեմ, պստաց Մարտիկ աղա՛ Սուրբանին զիրքին ու շեշտին կատղեցնող կերպով պազ, անտարբեր հանդարտութենէն կրակոտած... պատասխան տուր նայիմ... աս կը վայլէ՞ ըրածնիդ... զիս ո՛վ կարծեցիք Կուք... Հերթը չեղա՛ւ Պոլիս ըրած խայտառակութիւնիդ... հո՞ս ալ կ'ընէք կոր ըրածնիդ...

— Դիտել կուտամ ձեզի թէ ձեր բարձրաձայն խօսքերը ուրիշներուն ուշադրութիւնը կը գրաւեն կոր, եւ թէ ատոնք շատ կը նմանին այն խօսքերուն որոնց ի պատիժ կեղծողական կօմիտէին կողմանէ գատապարտուած էք 10 եզրկապական ոսկոյ տուգանքի մը զոր պաշտօն ուրի՛մ ձեռնէ այժմ՝ առնելու: Հետեւաբար կ'աղաչեմ որ պաղարկնութիւնով խօսիք ու կարելի եղածին չափ կարճ կապէք:

— Ինչ 10 ոսկի՞ մի, ինչ իրաւունքով... ինչ ըսել է... ո՛վ սուաւ ձեզի այդ իրաւունքը... Կուք ո՛վ էք որ ինծի պէս մէկուն հրաման կուտաք կոր...

— Այդ իրաւունքը Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը ինքզինքին տուած է՝ ամէն անոնց զէմ որոնք Ազգին ու Յեղափոխութեան հանդէպ մատնիչ կը հանդիսանան: Ի հարկին միջոցներ ունի այդ իրաւունքը յարգել ստալ: Ըմբոստներուն:

Մարտիկ աղան, զէմքը կաս կարմիր, պայթելու վերայ կ'աթծես, վրուխը վեր, ֆէնը ետեւ, աչուրները սպառնալից կերպով թաւալուն, աջ ոտքը ձախին վրայ յաղթականներէն հանդիման ուռած փորին նոռաչքը: — Սուրբան յարգէ գլխարկը մինչեւ աչքերը շեղ իջած, ձեռքը գաւազանին կոթին վրայ, հանդարտ ու պաղարկուն՝ Մարտիկ աղային բարկութեան արտայայտութիւններուն առջեւ, ինչպէ՞ք զնպող մը իր մէկ գաղանին ցիմաց:

— Ինչ ըսել կ'ուզէք, ըսաւ վերջապէս, Կուք վիճաբանութենէ մը ետքը, ուր Սուրբանին հանդարտ շեշտով արտասանուած վճռական, կշռուած խօսքերը շուրի շեղջերու պէս ինկած էին Մարտիկ աղային կողմու գայրոյ:

թին չլրայ, եթէ 10 ոսկին չի տամ, քնն կրնաք ընել: — Տէրոքի ենթարկուիք պիտի, վճռեց Սուրեան, ջուրի գաւաթ մը բարձրացնելով ու ուշադրութեամբ մէջը գննելով:

— Տէրոքի պիտի ենթարկուիմ, թո՛ղ ինչեք Մարտիկ ազա որուն անձանո՛թ չէր յեղափոխական լեզուին այս բառը:

Աս խօսքը գնդասեղի հարուածը եղաւ որ կը ճաթեցնէ ու կը սմբեցնէ տիկը: Մարտիկ ազա լոնց մեծ յուզումի ենթարկուած: Այդ բառին անունով նահատակուած մարդերուն յիշատակը միտքը ինչպէս յանկարծ, երեւակայութիւնը սարսափեցուց շարաշուք պատկերներով: Եթէ Սուրեանին ըսածը իրա՛ւ ըլլար... եթէ լրջօրէն գինքը Տէրոքի ենթարկէին: Աս շունչանորդի ազան ալ կատակելու, սուտ խօսելու երեւոյթ չունէր, այնքան զէմքը խիստ ու լուրջ էր, ու շեշտը վճռական. Պոլսոյ յեղափոխականին ատրճանակին յիշատակն ալ վրայ հասնելով, Մարտիկ ազային երեւակայաւ աչքերուն՝ տարօրինակ հեղինակութիւն մը, յարգախառն սարսափի նախապաշարում մը հազան բառը ու զայդ ներկայացնող երիտասարդը, զոր հիմա կը տեսնար բալորովին զուրս սարսի այն մպտուն շրջանակէն ուր առաջին անգամ հանդիպած էր անոր:

Խուլ բարկութեան մը զսպուած սլացքներով զեռուն, կոկորդին մէջ զայրացած բողոքի ազատակներ խեղճելով, Մարտիկ ազա, ցոկակապուած պոռոտօղի խղճալի կերպարանքով, ջանաց ընդվզել, բացատրութիւն պահանջել...

— Ճանրմ քնն ընել է ասիկա... քնն իրաւունքով... Ես ազատութիւն չունիմ ուզածս ընելու... դուք քնն կը խանդելք իմ գործերու... հոս Աղեքսանդրիա է, ազատ երկրի մէջ ենք հոս...

Քիչ քիչ նորէն կը յուզուր. շեշտը կը բարձրանար: — Ճանրմ հիմա ձեզի սաստեղէն շափուշի մը տամ նէ քնն կ'ընէք...

Ազատ էք ընելու այդ բանը, ըսաւ Սուրեան անանկ անտարբեր անհոգ շեշտով մը, որ Մարտիկ ազա զողաց վախէն:

Արդեօք ա՛ս ալ ատրճանակ մը ունէր, զգեստին տակ դարանակալ:

— Ի՞նչու կուտամ ձեզի թէ մէկու մը ժամապարտութիւն տուած եմ, ըսաւ Սուրեան ժամացոյցը նայելով: Հետեւաբար կ'աղաչեմ որ վերջնական պատասխանը անմիջապէս հաղորդէք ինձի. կը սպասեմ...

Վայրկեան մը լուռութեւն վերջ՝ Մարտիկ ազա, ճարհատ շարժումով մը, զրպանէն ոսկիներու կոյտ մը հանեց ու սեղանին վրայ դրաւ:

Կեանքին մէջ աս երկրորդ անգամէն էր որ իր աքաղաղի կամ ձիւ գողոգ զուլիք կը ծռէր միեւնոյն ուժին առջեւ, այնքան աւելի ահարկու որքան գաղտուկ գործող, մութին մէջէն սողոսկող, յանկարծակի:

— Ահա ընկալազիբը, ըսաւ Սուրեան ոտքի ելլելով: Ի՞նչու կուտամ ձեզի, Մարտիկ էֆէնտի, թէ շատ տեղի

չունիք ցաւելու գրամական այս շնչին կարուստին վրայ: Եթէ լաւ կը յիշեմ, անցեալ գիշեր ինքզինքնիդ հայրենասէր կը դաւանէիք. լաւ ուրեմն, այս ստակը հայրենիքին՝ օգտին համար պիտի գործածուի, անկախութեան սրբաճանձ զործին պիտի յատկացուի, եւ դուք ինքզինքնիդ երջանիկ համարելու էք որ ձերովսանն օգտակար կը հանգիստանաք Ազգին ու Յեղափոխութեան: Կը հաւատեմ ձեզի թէ Յեղափոխութեան զէմ խօսելէ, յարձակելէ լաւագոյն, աւելի խելացի ու ազնիւ բան մը պիտի ըլլար անոր յարիչ հայրենասիրական եռանդով, ձեր խելքին, բազուկին կամ քսակին օժանդակութիւնը բերել անոր, ու ձեր կարողութեան սահմանին մէջ Ազգին փրկութեանը փշխատիլ, եւ, ո՛վ գիտէ, նոյն իսկ Ազգային Բարերարի տիտղոսին արժանանալ այս կերպով, փոխանակ ձեր հակայեղափոխական վարմունքովը, խօսքերովը Ազգին համար զոհուողներուն արհամարհանքը, ատելութիւնը հրատիրելու ձեր վրայ, յեղափոխական կոմիտէներուն խիստ անօրինութիւններուն ենթարկելու ինքզինքնիդ: Հաւատացէ՛ք, Մարտիկ էֆէնտի, որ ասիկա ձեզի համար աւելի չափազանց պիտի ըլլար:

Կեանքին մէջ թերեւս պռաջին անգամ ըլլալով Մարտիկ ազա մտիկ կ'ընէր մէկու մը խօսքերը:

— Մնա՛ք բարով, Պ. Սրմաքէշեան:

Սուրեան հեռացաւ ուղիղ ու հանդարտ, մտաւ հիւ խօսքերուն ապաւորութեանը՝ մարդուն վրայ զոր դատելու, հասկնալու թափանցողութիւնը ունեցած էր:

— Հա՛, աքառօ, ըսաւ վերադառնալով, կոմիտէն յանձնարարած է ինձ յայտարարել ձեզ որ խտուար գիւլուած է ձեզ շարունակել ձեր նախկին ընթացքը, զոր փնտաւար կը հաւատայ իր վարկին, համբաւին: Գիտցած եղէ՛ք նաեւ որ լրտեսութիւն պիտի:

Չայրայթի շարժում մը, խօսք մը խղզեց Մարտիկ ազա, սաքի ելաւ, ու նոյն հետայն, իր խրոխտ սպասանալից զէմքը հազաւ նորէն:

— Ես ձեր ամէնուն ալ խերը կ'անիծեմ... շունչանորդիներ... դուք ալ երթաք ստրկիք տէ Մարտիկին հետ խաղալ ըլլար:

(Շարունակելի) ՊԱՐՈՅՐ

Ժ Ա Մ Ա Ն Յ
Ա Ջ Գ Ի Ս Բ Ա Ր Ե Ր Ա Ր Ն Ե Ր Ը

Երոսպա հիմնուած հայ Որբակոցի մը տնօրէնը առեւտրական կարեւոր քաղաքի մը վաճառականներուն պաշտպանութիւնն ալ խելորած ըլլալով, Ժողովի մը մէջ նախ իրական ինչ ինչ բացատրութիւններ պահանջուեցան՝ առաջարկը նկատողութեան առնելու համար: Այդ գործարարական ատենագրութիւնը կը հրատարակէր: Չանագան էր:

կատուներ կը պարտաւորեն մեզի ծածկանունով փոխա-
նակել իրականները:

Ատեանը բացուեցաւ ի ներկայութեան ինը երեւելի
վաճառականներու, ատենապետութեամբ Պօմ-Պօշեան
էֆէնտի:

Ատենապետը. — (Տնօրէնին) Միւսի՛ւ, բու առ որ-
բանոցիդ համար շատ գէշ բաներ լսած ենք:

Տնօրէնը. — Կը խնդրեմ ի՞նչ են լսածներնիդ, ըսող-
ները ո՞վ են:

— Ո՞վ ըսած է ըսած է, բաւական է որ ըսուած է:

— Կարելի՞ է որ ամբաստանեալի մը չայստնուի ի-
րեն համար ըսուածները. թշնամական գրպարտութիւններ
չեն կրնար ըլլալ ատոնք:

— Ձրպարտութիւն մը ճշմարտութենէն զանազանելու
չափ խելքերնիս կը հասնի:

— Ձեր իմացական կարողութիւնը կասկածի տակ ձը-
գել չէ միտքս. բայց աշխարհքի օրէնք է ամբաստանեալէ
մը բացատրութիւն ուզել:

Ժողովակաւ մը. — Ատենապետ էֆէնտի՛, ինչ որ մէ-
ջերնիս խօսեցանք հարցուցէք, տեսնենք ի՞նչ պիտի պա-
տասխանէ:

— Շա՛տ աղէկ: Միւսի՛ւ, առ որբանոցդ ո՞ր է, աշա-
կերտները ո՞ր տեղուանքներէն են:

— Լուկանօ է. տղաքը ամենքը Կիլիկիայէն են:

— Դէպք պատահած տեղուանքներէն են, ո՞րք են:

— Բնականաբար:

— Բան մը տեսե՞ր են. հարերնին մարերնին մտքեր-
նի՞ն է. ի՞նչ եղար գիտնի:

— Ի՞նչ բռել է. ամէն բան տեսեր են, ամէն բան
մտքերնին է. տասը տասերկու տարեկան են. սիրտ պէտք
է դիմանայ պատմանին լսելով. «Մէ՛յ մը մեծանք, ի՞նչ
պիտի ընենք» կ'ըսեն:

— Անուններնի՞ն՝ ի՞նչ է:

— Լեւոն, Հեթում, Սմբատ, Վահան, Արամ.....

— Ձեռք կուտայ: Ի՞նչ կը սորվին:

— Քրիստոնէական, Հայոց պատմութիւն, հայերէն,
գաղիերէն, տաճկերէն...

— Երգ մերգ:

— Անտարակոյս: Եկեղեցական, ազգային բոլոր եր-
գերը:

— Ժրմյաութիք ալ կ'ընեն:

— Տարակոյս ունի՞ք. սքանչելին կ'ընեն:

— Արհեստ կը սորվին:

— Այո՛. երկաթագործութիւն, ատաղձագործութիւն,
կոշկակարութիւն:

— Այսչափը բաւական է: Միւսի՛ւ, ալ ի բերանէ
ջուով զատեցար: Մեր զխոցածէն եւելը իմացանք:

— (Շուարած). Ի՞նչ կայ, ի՞նչ ըսի որ:

— Քիչ մը դուրս ելիր. ժողովս առանձին պէտք է
խորհրդակցի:

(Տնօրէնը դուրս ելաւ: Կէս ժամէն կանչուեցաւ. ատե-

նապետը իմացուց որ ժողովը տրամադիր կ'երեւի Որբա-
նոցին պաշտպանութեանը մասնակցիլ. բայց նախ կ'ուզէ
տնօրէնէն լուծած պատասխաններուն վրայ քանի մը բա-
ցատրութիւն անել. ու նաեւ պիտի ներկայացուին առա-
ջարկութիւններ ալ:)

— Ինչո՞ւ առ որբանոցը Եւրոպա բացեր են:

— Ազատ երկրի մէջ չեմ նեղուիր կրթութիւն տալու
համար:

— Պարապ խօսք: Օսմանեան կայսրութեան մէջ զըպ-
րոց, որբանոց պակաս չէ, ամէն օր ալ կը բացուին: Որ-
բանոց պէտք է օսմանեան հողը փոխադրես որպէս զի
տողոր շնորհքով ազգօգուտ գաստիարակութիւն տա:

— Ի՞նչ կ'ըսէք, կարելի՞ բան է:

— Քու գիտնալու բանդ է: Տղաքը ո՞ր կողմերէն են:

— Կիլիկիոյ զանազան քաղաքներէն. Այնթապ, Մա-
րաշ, Ատանա, Չէ՛յ...

— (Բարկութեամբ ընդմիջելով) Ձեռք կուտայ, ձեռք
կուտայ: Առ քաղաքներէն չըլլար: Ազգին բոլոր աղէտ-
ները առ քաղաքներուն երեսէն են. բարո՞վ խերով չըլ-
լային: Ուրիշ քաղաք չի կա՞յ մի:

— Ինչո՞ւ չէ. Վանէն, Մուշէն, Էրզրումէն...

— Մեզի ծագրելո՞ւ ելեր են: Ատոնք գէշին գէշն են:
Ազգին բոլոր աղէտները առ քաղաքներուն՝ երեսէն են.
բարո՞վ խերով չըլլային: Ուրիշ քաղաք կը պակսի:

— Շատ աղէկ. ուրիշ տեղեր ալ որբեր կան, Մար-
զուան, Ակն, Արաբկիր...

— (Բարկութեամբ) Մենք քեզի շնորհքով քաղաք կ'ը-
սենք՝ դուն ելեր ի՞նչ կ'ըսես: Անոնք բոլոր էն առաջ առ
տեղուանքը դրուեցաւ. մենք ալ բան գիտենք: Ազգին բո-
լոր աղէտները առ քաղաքներուն երեսէն են. բարո՞վ խե-
րով չըլլային:

— Կիլիկիայէն չառնե՛մ, Հայաստանէն չառնե՛մ,
Փոքր-Հայքէն չառնե՛մ, անգին ի՞նչ մնաց:

— Հայուն խրթլըխի՞ն եկեր են որ պիտի երթաս տե-
րութեան շիղերուն դպած տեղերէն անես: Մինչև Ձինու-
մաչուն հայ կայ, ա՛ռ ու առ: Աս առ է. կարճ կապենք:
Ի՞նչ տեսակ որբեր են նայինք:

— Որբին տեսակը կա՞յ, ամէնուն ալ հարը մարը
չար....

Ժողովակաւները. — Սըս սըս սը...

— Միւսի՛ւ, մտածելով խօսէ: Ամէն բան իր պատշաճ
լեզուն ունի. ատանկ բաներուն կ'ըսեն՝ զէպքին հանդի-
պած են:

— Առ ալ աղէկ, ամէնուն ալ հարը մարը զէպքին
հանդիպած են, տղաքն ալ որբ մնացած են:

— Շէնքով շնորհքով որբեր չի կա՞ն որ կ'երթաք ա-
տանկները կը փնտռէք:

— (Ձարմացած) Շէնքով շնորհքով որբեր ո՞րն է:

— Մարդը կը հիւանդանայ, խոստովանանքը կ'ըլլայ,
հաղորդութիւնը կ'առնէ, խելքը զլուսը անկողնին մէջ հո-
գին կ'աւանդէ, եկեղեցական արարողութիւններով կը տա-
նին կը թաղեն. ասանկ կանոնաւոր մեծնողին ո՞վ բան

կ'րսէ: Ասոնց ձգած տղաքն ալ շէնքով շնորհքով որբ են, մեղքցուելու ալ արժանաւոր: Ասանկ որբեր առնելու ես: Մէյ մըն ալ, ի՞նչ ըսել է աս տարիքը տղաք առնել որ մտքերնին բաներ մը գրած ըլլան:

— Եթի՞ տղաքը առնեմ:

— Ատ քու գիտնալու բանդ է: Ատ տարիքը տղաքներ կ'առնէք որ մտքերնին բաներ մը գրած ըլլան. անոնց զուտը շուտով կը լեցուի. երթան բան մըն ալ իրենց հանեն, վրէժ լուծենք ըսելով, ինչպէս բերնովդ խոստովանեցար: Անոնք ալ պատիժնին շուտ կը գտնեն, բայց ի՞նչ օգուտ, անոնց տղաքն ալ նորէն ասանկ մեր վրայ կը մնան: Ու մենք դատինք աշխատինք, մեր զաւակներն ալ դատին աշխատին, մեր թոռներն ալ դատին աշխատին որ ասանկները պահենք մեծցնենք: Աման Աստուած, աման Աստուած, աս ի՞նչ է մեր քաշածը:

(Ժողովականները կէս մը ոտքի ելած օձիքնին կը թոթուեն ու միտքերան) Աման Աստուած, աման Աստուած, աս ի՞նչ է մեր քաշածը:

— Ահա կը տեսնես, ժողովս ամբողջապէս կը բողոքէ, ա՛լ դուն մտմտա թէ ի՞նչ ընելու ես, ընտոր տղաք առնելու ես որ մեր վատահումները գրուես: Գանք սա անուններուն: Ասիկէ ետքը ա՛յ ատանկ անուններ պիտի չըլլան: Ազգին բոլոր ազէտները աս անուններուն երեսէն են. բարո՛վ խերով չըլլային: Առաջ ի՞նչ երջանիկ էինք երբ շէնքով շնորհքով հայու անուններ կային: Որբերուն աս մեր հին անունները գնելու է:

— Ատ գիւրին է. հին անուններ կը գնենք՝ Սարգիս, Գեորգ, Մկրտիչ, Գրիգոր, Թադէոս, Բարթողիմէոս...

— Կեցի՛ր, միտի, կեցի՛ր. ո՛ր կը վազես: Ատ անուններն ալ չեն ըլլար:

— Բայց մեր հին հօրենական, պապենական անունները ասոնք չեն:

— Ամէն բան իր ատենին: Հիմա աս անունները շատ ջուր կը վերցնեն: Մէյ մը սա Սարգիսը, Գեորգը երբե՛ք չենք ընդունիր: Ան ի՞նչ է ժամերը պատկերներուն վրան կան, ձեռքերնին սուր, ներքեւնին ձի, ոտքերնուն տակ զազան մը: Տէրութեան կասկած տալու չէ, տղոցը միտքն ալ բան ձգելու չէ: Մկրտիչը՝ արմատէն ջնջելու է. հիմա զացեր էջմիածին հանգիստը կը նայի: Ազգին բոլոր ազէտները աս մարդուն երեսէն են. բարո՛վ խերով չըլլար: Ան Գրիգոր է, Թադէոս է, Բարթողիմէոս է, անոնք մտքէ անցընելն ալ մեղք է: Մենք ալ քիչ մը ի գրոց ենք, գիտենք: Գրիգոր, Թադէոս, Բարթողիմէոս ըսի՛ր մի, լէպ տէ՛մէտէն լէպլէպի աղնար, « Հայաստանեայցս » ալ ինքնիրենը ետեւէն կուգայ: Հայաստան մայաստան չի կա՛յ. ատ բաները ա՛լ լիցան: Ազգին բոլոր ազէտները աս Հայաստան անունին երեսէն են. բարո՛վ խերով չըլլար: (Հեգնութեան շեշտով մը) Անուններու փունջին մէջ մեծ կարմիր վարդը կը պակսի: Ներսէսնիդ ո՛ր է, Ներսէսնիդ, ան ինչո՞ւ չես գրեր: ... Ինչ է նէ, նորէն կարգաւոր է, լեզու բանեմ: Ազգին բոլոր ազէտները աս մարդուն երեսէն են. բարո՛վ խերով չըլլար:

— (Ժպտով մը) Հասկցայ, հասկցայ. անտարանիչներու, առաքեալներու անուններէն գուրս չեմ ելլեր:

— Հա՛, սանկ կարգի եկուր. ի՞նչ անուններ պիտի գնես նայինք:

— Անտարանիչներէն կը սկսինք, Մատ...

(Ժողովականները ամենքը մէկ գապանակէ մը մղուածի պէս վեր կը ցատքեն գունաթափ, պոռալով) Պապանձէ, պապանձէ, լեզուդ բոնուի:

— Միտի՛, միտի՛, խելքդ զուտ կանչէ, բերնէդ ելածը ականջդ թո՛ղ լսէ: Միտքդ ո՛ր կ'երթայն մենք կը հասկնանք: Ազգին բոլոր ազէտները աս մարդուն երեսէն են. բարո՛վ խերով չըլլար:

— Բայց ի՞նչ անուն կ'ուզէք գուր ըսէք, ա՛լ բան չի մնաց:

— Ատ քու գիտնալու բանդ է. անանկ երկու միտքով անուններ չըլլար, ժողովիս որոշումը աս է: Գանք սորվըցուցածներուդ: Նայէ՛, քրիստոնէականին խօսք շունինք: Աղէկ հոգ տար: Ան խոնարհութեան, համբերութեան, հեգնութեան, հնազանդութեան պատուիրանները, իշխանութեան Աստուծո՛վ ըլլալուն ճշմարտութիւնը, թագաւորին հաւատարիմ չեղողները դժուր կ'երթանը, Մառայք հնազանդ լերուք տէրանց ձերոցը, հապա ան մէկ երեսիդ զարնոյին միւսը զարձուր պատուական խրատը, մարգրիտներ են, մարգրիտներ: Ասոնք տղոցը մտքերուն, սրտերուն, հոգիներուն մէջը խօթէ որ իրենք ալ փորձանքի չը հանգիպին, ազգն ալ, ու օր մը մեզի օրհնեն: Բայց Հայոց պատմութիւնը ըսուածին անունը պիտի չի լսուի. արմատէն, արմատէն (ձեռքովը մանգաղի պէս կը հնձէ): Հայկ, Արամ, Տիգրան, Լեւոն, չըլլար: Ազգին բոլոր ազէտները աս Հայոց պատմութեան երեսէն են. բարո՛վ խերով չըլլար: Օսմաներէնը ինչո՞ւ էն ետքը ըսիր: Է՛ն արաջ: Էւ անանկ թիւրքերէն, տաճկերէն նախատական բաները պիտի վերցուին. Օսմաներէն պիտի ըսուի: Գանք էն կարեւորին. ազգային երգը ի՞նչ է նայինք: Բարձր սրտան, արիք Հայկազո՞նք. ատոնց մէկ դի՛րը անգամ պիտի չի լսուի: Ազգին բոլոր ազէտները աս երգերուն երեսէն են, բարո՛վ խերով չըլլային:

— Եատ աղէկ, մինակ եկեղեցական երգեր սորվցնենք

— Բայց անոնց մէջ ալ անանկ Հրաշափառ է, վարդանանց է, Ղեւոնդեանց է, թագաւորաց քրիստոնէից եւ զինուորեալ մանկանց նոցա է, ըլլալու չեն: Զինուորեալ մանկանց եղեր, սըւսը նայէ. ան լակոտներն ալ ժամը ասանկ բաներ լսելով կը հաւատան որ մանուկը զէնք կրնայ առնել, քրիստոնեայ թագաւորին հետ միանալ: Ժըմլասթիքը ի՞նչ է նայինք:

— Առողջութեան համար է, տղաքը ուժ կ'առնեն, կը զօրանան:

— Պէտք չէ, մենք առողջ ենք նէ ժըմլասթիք ըրած ենք: Ատանկ բաները կոուի պատրաստութիւններ են: Սորվցուցած արհեստներդ ինչ են:

— Արդէն ըսի, ի հարկին ապրուստ ճարելու գործ մը:

Երկաթագործութիւն, ատաղձագործութիւն, կոշկակարութիւն:

—Արհեստը ազէկ բան է, ոսկի պիւղզիկ է կ'ըսեն, նալէ՛, ատիկա շատ խելացի մտածացեր են, բայց շնորհքով արհեստ սորվցնելու են որ կառավարութիւնն ալ չը կասկածի, աս քու սորվցուցածներդ որ մը շատ գէշութիւն առաջ կը բերեն:

—Ի՞նչ արհեստ կ'ուզէք, գուք ըսէք:

—Աս քու գիտնալու բանդ է. ժողովիս միտքը հասկըցար: Անանկ արհեստներ սորվցնելու են որ մէջը դանակ մանակ, սուր մուր, ասեղ, թօփլու, պիզ միզ չմըտնեն: Ատանկ արհեստներ շատ: Աս լմնցաւ. սա դաս տըւողները ո՞վ են նայինք:

—Դպրոցէ ելած, ուսեալ շնորհքով մարդիկ են:

—Անշուշտ դպրոցէ ելած են, հարցուցածնիս ատ չէ, անոնցմէ՞ են:

—Որոնցմէ՞:

—Չէ՞ք հասկնար կոր, հը, ի նոցանէ՞ են: Արդէն մէկիկ մէկիկ պիտի քննենք ես: Ազգին բոլոր ազէտները անոնց երեսէն են, բարո՛վ խերով չըլլային:

Հիմա՛, միտիւ, ժողովիս հոգին ըմբռնեցիր, որոշումները հասկցար, գնա՛ ատոնց վրայ ազէկ մը մտածա, քեզի ժամանակ, եթէ մեր բոլոր պայմանները յանձն կ'առնես, մենք ալ Որբանոցիդ համար ընելիքնիս գիտենք, ատիկա մեզի ձգէ:

—Բայց նախ կը փափագէի գիտնալ թէ ձեր աջակցութիւնը մինչեւ ո՞ր աստիճան պիտի ըլլայ, որպէս զի ես ալ անոր համեմատ ընելիքս որոշեմ:

—Է՛, ժամանակները յայտնի են. մենք ալ աս գործերուն երեսէն շատ փաստ ունեցանք, անոր համար սըրտերնիս էրած կը խօսինք: Մինակ մենք հոս եղողներս պիտի տանք, եթէ մեր բոլոր որոշումները ընդունիս, մենք մը մէջերնիս հանգանակութիւն ընելով քեզի ամիսը օսմանեան ոսկի մը կուտանք:

(Ժողովական մը) — Ատենապետ էֆէնտի, ամենքը չլմնցաւ, ուրիշ պայման մըն ալ կայ. սա գիտես...

—Ազէկ միտքս ձգեցիր, մենք էջը ախոռը մոռցանք. միտիւ.....

(Տնօրէնը, ոտքի ելլելով, աչքերը շորսդին ժուռ կ'ածէ, ազէկ մը կը նայի, եւ յետոյ ատենապետին դռնախով) Ի՞նչ, զեռ գո՛ւրսն ալ մնացող կայ եղեր: (Կը ձգէ կը մեկնի.) Քանի մը բոպլ շուարում:

—Սրիկան, մեզի ամենքս էջ ըրաւ, չլսեցիք:

(Ժողովականները սթափած, ամենքը ոտքի վրայ կը խօսին իրարու հետ) Տեսա՞ր ապերախտ շունը, մենք իրեն այնքան աղկուլութիւն ընենք, ինք մեզի էջ ընէ: — Հապա իր հասցուցած լակոտները ի՞նչ պիտի ըլլան: — Եկուր աս ազգին բարեք ըրէ: — Աս ի՞նչ է էֆէնտիմ քաշածնիս, աս ի՞նչ է, աշխարհքիս հոգը մեզի՞ են տուեր: — Բարեբար եղի՞ր որ էջ ըլլաս: — Հայտէ երթանք մէյմէկ պիտա խմենք, քիչ մը պաղշկինք: Է՞՞՞ աս ազգին ձեռքն քաշածներնիս (օձիք թօթուելով կը մեկնին):

ՍԿԵՊՏԻԿ

ՕՐՈՒԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Վերջին դէպքերը, կը գրէ «Տէլի Թէլիկրաֆ» ի Կ. Պոլսոյ թղթակիցը, Մահմետականներուն մէջ առաջ բերած են այն դժգոհութեան զգացումներն մին ուսկից պարբերաբար կը բռնուին: 1896ի վերջերս եւ 97ի սկիզբը, կարելի չէր գտնել ժողովուրդ մը որ իր վեհապետին նըկատմամբ զգացումով նուազ հաւատարիմ ըլլար: Ազգին երեք շորորդը Երիտասարդ-Թիւրքերուն հետ էր, ու ամէն մարդ բացէ ի բաց սուլթանին ու իր կառավարութեան դէմ կը խօսէր ու կը դաւէր, ու նոյն իսկ Թիւրքիոյ գործերուն վարժուած մարդոց համար՝ ակներես կը թուէր թէ տաքնապ մը մօտալուտ էր որ իրեն հետ պիտի բերէր սուլթանին գահընկեցութիւնը եւ փոփոխութիւն մը երկրին վարչութեան մէջ, որ ամէն դասակարգերու զգուշի դարձած էր: Բայց այս կարգի ոչ մէկ բան պատահեցաւ: Հելլենական պատերազմը ծագեցաւ, եւ սուլթանը նորէն ձեռք բերաւ իր ազգեցութիւնը, մանաւանդ յաջս զինուորական կուսակցութեան, որ ձեռքէ ելլելու վրայ էր: Ապա իր Համիտ ժամանակ չկորսնցուց, ու ձեռք գարկաւ Երիտասարդ-Թիւրք կուսակցութիւնը խորտակելու: Աստուծոյ շատը սպաննուեցան, ոմանք աքսորուեան, ուրիշներ կաշառուեցան, եւ ոմանք ալ համոզուեցան թէ սուլթանը երկրին բարեբին համար զիշեր ցերեկ կ'աշխատէր կոր եւ մոռցան իրենց տրտունջները: 1897ը չվերջացած, ամբողջ ազգը առաւել քան երբեք հաւատարիմ էր, սուլթանը՝ իրենց կարծիքով՝ մարդերուն եւ վեհապետներուն ամէնէն ազնիւր ու ամէնէն լաւը, եւ անոնք իսկ որոնք առաջ ամէնէն աւելի դառնութեամբ կը խօսէին իրեն դէմ՝ հիմա զինքը գովաբանողներուն առաջիններն էին:

Այս կացութիւնը շատ երկար չտևեց, եւ ամէն բան ցոյց կուտայ թէ առջի դժգոհութիւնը նորէն սկսած է սաստիկանալ սուլթանին դէմ: Կրեալի կորուստը եւ Վիլհելմ կայսեր այցելութեան առթիւ եղած խել խօլ ծախքերը՝ զխաւոր պատճառն են այս հակազգեցութեան, ինչպէս նաեւ զրամի պակասը, որ ամէն ժամանակէ աւելի սաստիկ է: Բոլոր դասակարգերը եւ բոլոր ցեղերը զրգոհ են, քրիստոնեայ թէ մահմետական, եւ Կրեալի ազատութիւնը՝ միւսները կը մղէ փորձելու եւ նոյն փրկութիւնը ձեռք բերելու:

Մակեդոնիա զրգոման մէջ է, եւ օր օրի միջոցներով է որ խաղաղ կը պահուի, ու Ալպանիացիներուն կատարեալ ազատութիւն թողուած է՝ որպէս զի սուլթանին դէմ չչարժին: Հայաստանի մէջ Քիւրտերը ուզածնին կ'ընեն, եւ, ա՛լ կողոպտելիք Հայ մնացած չըլլալով, հիմակ Թիւրքերուն դէմ դարձած են, որոնք հիմա կը զրջան զանոնք զինամ ու մարդած եւ այսպէս ահաւոր մարմին մը վերածած ըլլալնին: Եւ մէն՝ ժողովուրդը շարու-

գե ճգոր այնպէս ստացաւ սնկաւ զ. իւր մարդ

նակ ապստամբութեան մէջ է, եւ Պաղտատի նահանգին մէջ՝ սուլթանին իշխանութիւնը լոկ անուանական է: Չինուորները ու պաշտօնեաները ամսական ստացած չունին:

«Տէլի թէլէլրաֆ», թիւրքիոյ կացութեան այս ճըշգրիտ նկարագրութիւնը տալէ յետոյ, հետեւեալ յատկանշանական եզրակացութեան կը յանդի.

«Կացութեան ամէնէն շահեկան կէտը սա է որ թիւրքիոյ հետ համաձայնութիւն մը գոյացնելու համար Գերմանիոյ բոլոր ցանքերը եւ Վիլհելմ կայսեր քործունէութիւնը ո եւ է համակրանք գտած չեն թիւրքերուն մտքին մէջ: Թիւրքիոյ մէջ Անգլիոյ դիրքը անտարակոյս գէշ է, բայց ասոր պատճառը՝ լոկ իսլամութեան դէմ եղած յարձակումներն են: Խորապէս փափաքելի է որ կրետական խնդրին վերջանալուն ընծայած առիթէն օգուտ քաղուի՝ լայանի բնելու համար որ Անգլիոյ գոգոհութեան եւ իր առեւտրայթ թշնամութեան պատճառը պարզապէս սուլթանին վատթար վարչութիւնն է, եւ ո՛չ թէ դաւանանքի ո եւ է խնդր: Միսիւլմաններուն մէջ գոգոհութիւնը հիմակ այնչափ ընդհանուր է որ մեզի համար շատ դիւրին պիտի ըլլայ վերստին ձեռք բերել ազգեցութիւնը զոր կորսնցուցինք՝ 1895 էն ի վեր հայկական խնդրին առթիւ մեր սխալ եւ տատամսոտ քաղաքականութեան պատճառաւ:»

Անգլիական մեծ թերթին այս տողերը անշուշտ մեզի աւելի հաճոյք կը պատճառեն քան իր այն միւս յայտարարութիւնը թէ «Վիլհելմ կայսեր սուլթանին վրայ տարածած խեղճութիւնն է՝ լաւ արդիւնք մը առաջ եկած է, սա թէ ա՛լ քիսու հաւանական չէ որ Ապտիւլ Համիտ իր կայսերական բարեկամը նեղ դիրքի մէջ դնէ՝ Հայաստանի մէջ նոր ցարգեր գրգռելով կամ վաւերացնելով: Անշուշտ շատ աչքի գարնող անիմաստութիւն մը պիտի ըլլար եթէ գերման կայսրը, յայտարարելէ յետոյ թէ միտքը դրած է պաշտպանել Պաղեստինի ըրիտոնեաները, թող տար որ իր պաշտպանեալը՝ սուլթանը՝ ըրիտոնեաները բնաջինջ ընէր թիւրքիոյ ուրիշ կողմերը: Ասկից գատ, յայտնի է որ, հակառակ հայկական խնդրին մասին Եւրոպայի դէմ վաստկած դիւանագիտական յաղթանակին, սուլթանը մեծապէս խոսոված է հայկական ջարդերուն առանջ բերած գայրոյթէն, եւ կրետէն կենդանի օրինակ մըն է իրեն թէ ի՛նչ հեռանալներ կրնան առաջ գալ այնպիսի դէպքերու կրկնութենէն, որոնց վրէժը թէպէտ լուծուած չէ, բայց որոնք մոռցուած չեն:»

Անգլիական թերթին ուրախութիւնը թէ Հայաստանի մէջ ա՛լ ընդարձակ կոտորածներ չի պիտի տեղի ունենան, մեզ անտարբեր կը թողու, երբ Հայաստանէն եկած վերջին տեղեկութիւնները ցոյց կուտան թէ ամենօրեայ բնաջինջում մըն է որ կը տիրէ հոն հիմա լոկ բայց անխնայ:

* *

Գերմանիոյ խորհրդարանին մէջ ա՛լ արեւելեան խընդրին հետ՝ Հայոց կացութիւնը յիշուեցաւ: Ընդդիմադիր

կուսակցութեան պետը, Պ. Քիլդեր, խօսելով Գերմանիոյ արեւելեան քաղաքականութեան վրայ, բնա ի միջի պլոց. «Մենք ո եւ է համակրանք չունինք Հայերը ջարդող թիւրքերուն համար:» Արտաքին գործերու նախարարը Պ. Ֆուն Պիւլով բնա իր պատասխանին մէջ. «Նախամեծար կը համարիմ հայկական խնդրով բնա չգրադիլ:» Ու անցաւ խօսելու Մակեդոնիոյ եւ ուրիշ խնդիրներու մասին: Իր յայտարարութեան մէջ նշանակելիք միակ կէտը սա է որ կը յուսայ, որչափ որ մարզիօրէն կարելի է հաշուել, թէ Արեւելի մէջ բարեկարգութիւնը չի պիտի վրգովուի մտաւոր ապագայի մը մէջ: Գերմանիա լոկ առեւտրական շահեր ունի Արեւելի մէջ, եւ այդ շահերը հոն առաջ տանելու համար, փափաքող է որ խաղաղութիւնը պահպանուի այնտեղ:

* *

Պ. Ֆուն Պիւլով հաւաստեց միանգամայն թէ Վիլհելմ կայսեր ուղեւորութիւնը՝ ուրիշ ո եւ է պետութեան մը անձկութիւն պատճառելու բնութիւն չունի: Ահարկութիւնը Ռուսիոյ էր, որ սակայն չուշացաւ թիւրքերուն հասկնցնելու թէ երբեք չէր հրաժարած թիւրքիոյ վրայ իր բարոյական գերակշիռ ազդեցութենէն: Նիքոլա մեծ-դուքոր յատկապէս կ. Պոլիս գնաց՝ նախագահելու համար Սան-Սթէֆանոյի մօտ ուս զինուորներուն յիշատակին կանգնուած փառաւոր յիշատակարանին բացւան հանդէսին: Բան մը անշուշտ աւելի չէր կրնար գպիլ սուլթանին շիղերուն քան այսպէս բիրտ վերջուշումը քան տարի առաջուան այն օրերուն ուր ոուսական յաղթական զօրքերը կ. Պոլսոյ պարիսպներուն տակ կը բանակէին:

Այս ամբողջ իրողութիւններէն շատերու հանած եզրակացութիւնը սա է թէ կրետական խնդրին առթիւ գոյացած մասնակի համաձայնութիւնը վերջացած է: Անգլիա իր կորսնցուցած դիրքը վերստին ձեռք բերել կը մտաբերէ, Գերմանիա նոր գաշտեր կ'երազէ գործունէութեան, եւ Ռուսիա բիրտ կերպով թիւրքիոյ գլխուն կը բռնէ իր ստերը: զիտնարով որ բան մը աւելի պերճախօս չէ թիւրքերուն աչքին՝ քան այժմ:

Այս ընդդիմամարտ քաղաքականութեանց արդիւնքը անշուշտ պիտի չուշանանք տեսնելու:

Լ. ԶՈՐԹՈՒՄԵԱՆ

ՇՈՒՐԵՐ

Բիշքերի քորակիցը կ. Պոլսէն կը գրէ դեկտ. 15 քրշակաւով.

(Բարդիշէն առեւտած մասնաւոր եամակներ կը ծակուէցանէն քի բաշական ծակը դիպք մը պատահած է Պոր, այդ քաղքէն իբր վեց մղոն հեռու պզտիկ գիւղ մը: Բարդիշի իշխանուքիւնները իմացած էին քի հայ յեղափոխական

ներոս խոսքը մը պահուցուած էր այդ գիշոր, եւ զօրքերոս չոկատ մը դրկուցեցաւ հոն: Գիշորին միշտ տուներէն աւելատ գտնուող տուներ մը սկսան կրակ ընել զօրքերոս վրայ, որոնք անմիջապէս պաշարեցին զայն: Զօրքերը սկսան առատ կրակ տեղայ շէնքին վրայ, եւ որովհետեւ մեջիները անձնատուր ըլլալ չէին ոգեր, զօրքերը կրակի տուին տուեր: Հայերը սակայն մահը նախատեսար համարեցին՝ քիչըք իշխանութեան ձեռքը իյնալ, եւ կրակը մարելէ յետոյ է միայն որ չորս ածխացած մարմին գրուցուցաւ: Հաստատուցաւ քի դիակներուն երեքը՝ գեղին Հայերէն էին, եւ չորրորդը կը կարծուէ որ դրսէն եկած խոսովարարի մըն է:

Բաղէշի իշխանութիւնները՝ անցեալ ամիս հայ ոսկերիչներոս շուկան բաշտող Թիւրքերէն մէկ քանին ձերբակալելու ձեռնարկուցին: Բայց մէկ քանի ժամ յետոյ, երաշխաւորութեամբ ազատ արձակեցին զանոնք: Գողցուած իրեղիներէն ոչ մին գտնուած է:

Բաշական քոսով շուսաւորչական Հայեր վերջերս կարողիկոսքիւնը ընդունած են, եւ Հայոց պատրիարքարանին Խաան ժողովը այս գործին նշարած է իր ուշադրութիւնը: Այս կրօնափոխութիւնները մասնաւորապէս բազմաթիւ եղած են Իզմիտի եւ Պրոսպայի գաւառներուն մէջ, ուր վերջերս 60 ընտանիք կարողիկոսքիւնը ընդունած են: Կարողիկ քրտրականտան մեծ ետանդով առաջ կը տարուի անբողջ Հայաստանի մէջ, ֆրանսական կղերը մասնաւորապէս անկէ ջանք քափելով այդ նպատակին համար: Իրենց ձգերուն գտած յաջողութիւնը սակայն հետեւանք չէ իրենց կրօնական փաստերուն համոզիչ բնութեանը, ըստ որում խեղձ սովամահ գիշացիներուն պէտք եղածը ուրիշ բան չէ բայց երբ անմիջական նպատակ եւ ազդեցիկ պաշտպանութիւն: Կարողիկները երկուքն ալ կոչուան. շուսաւորչական կղերը ո՛չ մին կրնայ տալ, ո՛չ միւսը: Վանի ֆրանսական դեր-հիւսպատուր դովինիկեան կրօնաւոր մըն է: Իր տրամադրութեան տակ Թրանսայի մէջ նպատակ համար հաշարուած 60,000 ֆրանքի գումար մը դրուած էր, եւ ինք այդ գումարը գործածեց անկէ տեսակ երկրագործական պիտոյք գնելու զորոնք չքաւոր գիշացիներուն փոխ կոչուայ անուանական վարձքով մը: Քիչըք տեղը, քիչըք չեն վարակիր գեղացիին կանակէն շարիկը քաշելու առելու, ձեռք չեն դպցներ սակայն այդ փոխ անուանած գործիքներուն, գիտնալով որ գործերին ֆրանսական կառավարութեան հետ է: Այս դրութիւնը մեծ օգուտ արտադրած է, եւ ուրիշներ կրնան օգտակարապէս ընթացիկակեղ զայն:»

—Կ. Պոլսէն. Հայոց պատրիարքարանը հետագրեր ստացած է Վանէն, Բաղէշէն ու Տիարպէթիէն որոնք կը ծանուցանեն քի հայ ժողովրդին բշտաւորչութիւնը ծայրագոյն ստիճանին հասած է, մանաւանդ վերահաս ձերան պատճառաւ: Պատրիարքը Երջուրդ Գեօշկ գնաց, ուր այս հետագրերը սուղբանին հաղորդեց:

—Ամերիկացի մը, «Թայմզ»ի մէջ խօսելով այն սերտ միտքեան վրայ որ հետգիտէ կը շեշտուի Միացեալ-


Նահանգներոս եւ Անգլիոյ միջեւ, կ'ըսէ. «Իմ հաստատ կարծիքս է քի երբ Անգլիա Միացեալ-Նահանգներէն գրուներ այն աշակցութիւնը զոր ասուք Անգլիայէն գտան վերջին պատերազմին ժամանակ, երկու-երեք տարի առաջ ուսան հայկական ջարդերուն վերջ կը դրուէր: Անգլիա միայնակ մնաց այն ատեն, բայց այսօր ա՛յ կարելի չէ որ այդպիսի մարդասիրական մեծ խնդրի մը մէջ՝ Միացեալ-Նահանգները չաշակցին Անգլիոյ:»

—Վանէն Տր. Բեյնոյտս կը գրէ հոկտեմբեր 26 քրականով: 750 կնկան գործ կոչուանք, որոնց իշարքան չիւրը միջին հաշուով չորս հոգի կ'ապրեցնէ: Մեր տուած վարձքը՝ վաճառականներուն տուածէն մէկ երրորդ առելի է, եւ նորէն՝ հագիւ հացերէն կրնան ձարել իրենց վաստակովը: Ասկից գատ, 600 հոգի կ'աշխատեցնեն մանածը կտաւի վերածելու. իշարքան չիւր հոր չորս հոգի կ'ապրեցնէ: Մանածը նոյն վիճակին մէջ ալ կը ծախուի: Հորերուն ծախքն է ամսական 325 ոսկի եւ այս գործէն ամսական 50էն 75 ոսկի կորուստ մը կ'ընենք: Օրական հաց կոչուանք 320 հոգիի: Իրանցիներէն մէջ ունենք 350 տղայ. իշարքան չիւր որքի տարեկան ծախքն է 5 ոսկի: Թշուաւորութիւնը սաստիկ է միշտ, և նոր նպատակներոս մեծ պէտք կայ:

ՀԱՍՏԵ ՈՒ ԲԱԾՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին շրկել առ

L. FRANK,
309, LADBROKE GROVE,
(ENGLAND). LONDON, W.



Տարեգլխին առթիւ, կը խնդրենք մեր բաժնեգիններէն որ հաճին ՓՈՒԹՈՎ իմացնել մեզ թէ կ'ունեն վերանորոգել իրենց բաժնորդագրութիւնը:

Կը յիշեցնենք միանգամայն թէ պէտք է բաժնեգինները շրկել մեզ ԿԱՆՔԻՆ՝ առաքման մէջ ու եւ ընդհատում տեղի չունենալու համար:

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին եւ 15ին: Բաժնեգինն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տոլար:

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹՒՆ

Աղախներ — Վահրամ Սվաճեան 275
 Անահիտ 239
 Անգլիական բարեգործութիւնը ի նպատակ Հայերուն — Լ. Զարբունեան 333, 349
 Անդրեաս Արծրունի — Լ. Զարբունեան 318
 Անիտոսի նպատակ — Արփիար Արփիարեան 49
 Ախատանց մը — Մոսիս Պառեւ 105
 Ապականոսեան պատկանորտանները — Արփիար Արփիարեան 33
 Առ Ամերիկա — Վահրամ Սվաճեան 242
 Առաջին շրջանը 369
 Արիւնը — Տիկին Մարի Սվաճեան 34
 Արիւնտ յիշատակներ — Վահրամ 7, 21, 57, 135
 « Բարեկործաններուն » գործադրութիւնը հայկական վեց անհանգներուն մէջ — Լ. Զարբունեան 124
 Գերմանացիները Կ. Պոլիս — Ժ. Կոլիս 292, 310, 327
 Դասադրութիւն Կիլիկիոյ սրտին դէմ — Յակոբ Օհանեան 129
 Դեպի սոսաւոյն — Ա. Ա. 207
 Երեք պատկեր — Տիկին Մարի Սվաճեան 259
 Երկու դար — Արփիար Արփիարեան 273
 Երոսպան — Արփիար Արփիարեան 241
 Զատիկ — Վահրամ Սվաճեան 116
 Զաւակը — Տիկին Մարի Սվաճեան 83
 Զէյթունցի տղայ — Վահրամ Սվաճեան 35
 Զինադարար — Արփիար Արփիարեան 209
 Էջմիածին — Լ. Զարբունեան 97
 Թափօրը — Վահրամ Սվաճեան 85
 Ժամանակակից պատմութեան էջեր.
 Կ. Պոլսոյ պահպանողական վարչութիւնները 1885
 եւ 94 — Արփիար Արփիարեան 3, 39, 68, 99,
 138, 148, 169, 186, 198, 231
 Հրոսակի մը յիշատակներէն — Արփիար Արփիարեան 336, 359, 373

Ժամանց.
 Օրնեկալ Գերդաստանը — Սկեպտիկ 27
 Տում մը — Սկեպտիկ 45
 Հերոս ոչ հոստոս — Սկեպտիկ 236
 Նամակ բարեկամի մը — Սկեպտիկ 254
 Տեսակցութիւն մը Պ. Ճանկիշեանի հետ — Երոս 270
 Ազգիս բարերարները — Սկեպտիկ 379
 Իմ հայրենասիրութիւնս — Արշակ Չօպանեան 113
 Ինչո՞ւ վասպորական — Արփիար Արփիարեան 164
 Իրականութեան հետ — Արփիար Արփիարեան
 Լեռնի բազմաշրիկ ստորը — Վահրամ 244
 Լուրեր 224, 239, 255, 272, 287, 319, 336, 352,
 368, 383
 Խարտեցումներ — Արփիար Արփիարեան 156
 Խրոստ եւ մը — Արփիար Արփիարեան 145
 Մովսէս հետ — Հրազդան 205
 Հայաստանը սգաւոկոչ էրսպիս մը 1700ին — Մոսիս Միշեւ 265
 Հայաստանի բարեկամները — Լ. Զարբունեան 303
 Հայաստանի կացութիւնը
 Մշոյ դաշտ — Ֆ. Է. Գրոս 107
 Չնշխածագ, Արարիկ, Ակն — Բ. Ա. Ֆոնդանա 120
 Սատուն, Կիւնի և Մոշ — Ֆ. Է. Գրոս 140, 151
 Խարբերողի անհանգը — Է. Միլարտ 183
 Չէյրուն — 203
 Վանի անհանգը — Հ. Տրփրան 220
 Տիարպէրի — 234
 Խարբերող — Հ. Պարկըր 235
 Բաշէ 252
 Տիարպէրի 253
 Անգլիացի կանանց գործը 284
 Հայաստան, իր պատմութիւնը, իր գրականութիւնը, իր դերը Արեւելքի մէջ — Արշակ Չօպանեան 166,
 179, 194, 212, 228
 Հայաստան 14րդ դարուն — Սրբ Ճոն Մոնտեմի 284
 Հայերը սնցեալին մէջ — Կ. Յ. Բաւմաշեան 147
 Հայերը եւ Հրեաները — Լ. Զարբունեան 158
 Հայկական երեկոյց մը 91

- Հայկական խ"որին վերաբացումը 337
 Հայ միտքը Եւրոպայի առջեւ 123, 150, 186
 Հայ պանդոխտը — Վահրամ Սվաճեան 68
 Հայրենի յիշատակ — Վահրամ Սվաճեան 98
 Հայ ցեղագրութիւն — Ալտկարան 247, 262
 Հայ ցեղը — Լ. Զարբուճեան 321
 Հանրային կարծիք — Արփիար Արփիարեան 289
 Հերոսները — Արշակ Զօպանեան 65
 Հերքումը մը սարիւ — Արփիար Արփիարեան 287
 Հրեաներէն օրինակ — Արփիար Արփիարեան 305
- Կաղանկ — Լ. Զարբուճեան 14
 Կապոյտ Գիրքը — Լ. Զարբուճեան 92
 Կրատուրն — Լ. Զարբուճեան 161
 Կովկասի Հայերը — Բիւր Մոսան 19, 36, 50
- Մայր Հայաստանին, Օրօր — Արշակ Զօպանեան 1
 Մարդ մը — Լ. Զարբուճեան 32, 80
 Մարտիկ աղա — Պարոյր 297, 306, 323, 344, 361, 376
 Մեկ քանի գօեր Կրատուրնի կեանքին 173
 Միշեպիկ — Վահրամ Սվաճեան 18
- Ցեղափոխութեան Մակարոյճները.
 Արտասանմանի գործիչը — Վահրամ 315
 Յռնաստանէն ձամրու եօրեր. Հայ կամաւորները ձեռնու-
 կան վերջին պատերազմին մէջ — Միր Երօ 86, 131
- Նոր կեանք 1
 Նոր վախ մըն ալ — Արփիար Արփիարեան 493
 Նպաստի գործը Հայաստան ոչ Կիլիկիա — Լ. Զարբուճեան 110
- Չվերջացաւ — Արփիար Արփիարեան 353
- Պարսկաստան եւ Հայերը — Վ. Շահենի 342, 370
 Պիղմարց — Վահրամ Սվաճեան 301
- Ռուսիա եւ Պարսկաստան — Լ. Զարբուճեան 260
 Ռուսիոյ նրաւերը — Լ. Զարբուճեան 272
- Վարժանիւն — Վահրամ Սվաճեան 354
 Վերադարձնողին Սանճանադրութեան — Արփիար Արփիարեան 17
 Վերընձիւնը — Արփիար Արփիարեան 225
 Վտարանկիւն — Վահրամ Սվաճեան 137
- Տարեդարձ — Վահրամ Սվաճեան 262
 Տիրապետութեան մը ձեւերները — Արփիար Արփիարեան 177
 Ժրիտը — Վ. Շահենի 332
- Քաղաքական ծրագիրներ — Արփիար Արփիարեան 81
 Քիչրտ ցեղագրութիւն — Ալտկարան 276
- Օրոշան կեանքը — Հրապոյս 22, 55, 89, 117, 216, 281, 312
 Օրոշան քաղաքականութիւնը — Լ. Զարբուճեան 31, 43, 63, 143, 188, 208, 223, 238, 286, 304, 350
- Յրանալի արեւելեան քաղաքականութիւնը — Է. Լավիս 12, 60, 78,
 Յրանալի ողորդ մը Էջմիածնի վանքը 17րդ դարուն
 — Ժ. Պ. Թավերնիկ 75